Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5914

(ՖՐԱՆՑ ՀՈՖՄԱՆԻՑ)

ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ՈՐԴԻՔԸ

ՎԷՊԻԿ

ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

Ռուս. թարգմանեց

ՕՐ. ՄԱՔՐՈՒՀԻ ՇԱՄՔՈՐԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

835
2-96

5974
835
Հ-96
28 JUN 2005
30 MAY 2011

(ՖՐԱՆՑ ՀՈՖՄԱՆԻՑ)

ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ՈՐԴԻՔԸ

ՎԷՊԻԿ

ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուս. թարգմանեց

ՕՐ. ՄԱՔՐՈՒՀԻ ՇԱՄՔՈՐԵԱՆՑ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

14 .06. 2013

1400

Дозв. цензурою 22 Марта 1904 г. г. Тифлисъ.

ՊԵՏ ՀԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникова
56024-66

ՕՐԵԼԼԻԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Նցեալ դարու վերջերում Լոնդոնում ապրում էր մի աշխատասէր, աղնիւ քարտաշ՝ անունը Օրելլի։

Նա Իրլանդացի էր և մօտ քսան տարի էր, որ ապրում էր Լոնդոնում։ Նա լաւ փող էր աշխատում, որովհետև Լոնդոնի յայտնի ճարտարապետներից մէկը՝ պարոն Ջոնսոնը միշտ հրաւիրում էր նրան իւր շինութիւնների վրայ և առատ վարձատրում։ Օրելլին խելօք և արթուն մարդ էր։ Լոնդոնում Օրելլին ընտանիքի տէր էլ դարձաւ. նա ամուսնացաւ մի երիտասարդ աղջկայ հետ՝ Մէրի Կէննեթի անունով, որը ծառայում էր իրան հովանաւորող ճարտարապետի մօտ։ Դրանից յետոյ Լոնդոնը աւելի գրաւիչ դարձաւ նրա աչքում։ Նա վարձեց մի փոքրիկ տնակ քաղաքի հեռաւոր մասում, ուր բնակարանները աւելի աժան էին, ու տնա-

ւորուեց։ Նրա տան մէջ չկար ոչ հարուստ կահաւորութիւն և ոչ ճոխութիւն, բայց նրա մէջ թագաւորում էր այնպիսի կարգ ու կանոն, ինչպիսին հազիւ կարելի է պատահել ամենա-արիստոկրատ տան մէջ։ Օրելլիի կինը շատ տնարար կին էր։ Նրանք շատ տարիներ ապրում էին հանգիստ և անդորր բախտաւորութեան մէջ։ Աստուած տուեց նրանց երկու երեխայ. մի տղայ և մի աղջիկ։ Ընտանիքը մեծացաւ, աւելացան և ծախսերը, բայց, շնորհիւ Օրելլիի աշխատասիրութեան և կնոջ տնտեսութեան, նրանք առաջուայ նման չէին կրում ոչ մի զրկանք։ Ոչ մի բան չէր խանգարում նրանց բախտաւոր կեանքի ընթացքը, բացի երեխաների հիւանդութիւնից. բայց Մէրին գիտէր այնպէս պահպանել նրանց, որ մանկական հասակին յատուկ հիւանդութիւնները շուտով անցնում էին։ Տարիները անցնում էին իրար ետևից։ Օրելլիի տղան—Ջեմսը 14 տարին լրացրել էր, իսկ աղջիկը—Բեատին 13։ Ամեն ինչ անցնում էր իւր կարգով։ Բայց Աստուած ցանկացաւ այդ ընտանիքին ուղարկել մի ծանր փորձանք։

Մէկ անգամ հօրը տուն բերին պատգարակով։ Նրա մարմինը բոլորովին ջարդուել ու արիւնաշաղախ էր եղել։ Շինութեան ժամանակ կտրուել էր թոկը, որով բարձրացնում էին մարմարեայ սիւնը. սա վայր ընկնելով իւր ծանրութեան տակ ջախջախել էր խեղճ Օրելլուն։ Հրաւիրեցին բոժիշկներ, որանք յայտնեցին, որ առողջանալու ոչ մի յոյս չկայ։ Մեռնողը մի բոպէ ուշքի եկաւ. նա օրհնեց կնոջը և երեխաներին, նայեց վերջին անգամ նրանց վրայ մարող նայուածքով և փչեց շունչը։ Մօր և երեխաների վիշտը անսահման էր։

Միայն հաւատն էր, որ պահպանում էր նրանց յուսահատութիւնից։ Նրանք չէին տրտնջում։ Նրանց մաշող կսկիծը թեթևանում էր միայն այն գիտակցութեամբ, երբ մտածում էին, որ հանգուցեալը այժմ երկնքից նայում է նրանց վրայ և տեսնում թէ ինչպէս սրբութեամբ նրանք պահում են նրա յիշատակը, ինչպիսի սիրով մտաբերում նրան և ինչպիսի տանջանքով կրում ծանր կորուստը։ Մէկ առած կայ. եթէ մարդու բախտը երես թեքի, քթի ջուրը աչ-

քերը կըթափի։ Ուղիղ որ, կեանքում անբախտութիւնը անբախտութեանց յետևից է գալիս։ Բացի նրանից, որ այրին ու որբերը զրկուեցին ամուսնուց և հօրից, նրանք զրկուեցին և կերակրողից։ Գաղտնի երկիւղով խեղճ Մէրին մտածում էր, թէ ինչ է սպասում իրանց ապագայում։ Ուղիղ է, հանգուցեալ Օրելլիի մահից յետոյ մնացել էր մի փոքր դրամ, բայց նրա մի մասը արդէն ծախսուել էր նրա թաղմանը, իսկ մնացած մասը, հնայած Բեռսիի չափազանց խնայողութեան, հատնելու վրայ էր։ Ինչպէս էլ որ ուժան էր նստացնում նա ճաշը, այնուամենայնիւ ամենայն օր ստիպուած էր փող ծախսել։ Բացի այդ մօտենում էր բնակարանի վճարի ժամանակը։ Սկզբում Մէրին ամենայն կերպ աշխատում էր երեխաներից ծածկել իրան վրդովուող մտքերը, բայց յետոյ արդէն անկարելի էր։ Մէկ անգամ Ջեմսը մօտեցաւ մօրը, որ նստած էր, խորասուզուած մտքերով. համբուրեց նրա ձեռքը և քնքշութեամբ ասաց.

—Մայրիկ, տեսնում եմ, որ դու մեծ հոգս ունես։ Դու ոչ թէ միայն հայրիկի

մահուան մասին ես մտածում, այլ մի ուրիշ բան էլ է քեզ վշտացնում։ Ասա, սիրելի մայրիկ, ինչ հոգս ունես։ Գուցէ ես կարող եմ քեզ օգնել։

Մօտեցաւ և Բեռսին։ Նրանք երկուսով սկսեցին աղաչել մօրը, որ նա յայտնէ նրանց իւր սրտինը։ Մէրին չկարողացաւ ընդդիմանալ։ Նա անկեղծութեամբ բացատրեց երեխաներին, որ թէ իրեն և թէ նրանց ամենամօտ ապագայում սպասում է կատարեալ աղքատութիւն։ Ջեմսը կախ ձգեց գլուխը կրծքի վրայ ու ընկաւ մտածմունքի մէջ։ Իսկ Բեռսին կպաւ մօրը և սկսեց լաց լինել։

—Խեղճ Մէրիի աչքերից նոյնպէս գլորւում էին արցունքներ։

—Մայրիկ, մի տրտմիր, արտասանեց Ջեմսը. լաւ է, որ դու մեզ յայտնեցիր թէ ինչն է քեզ այդպէս անհանգստացնում։ Մի վհատիր։ Թէ ես և թէ Բեռսին կայտառ և առողջ ենք։ Մենք կարող ենք աշխատել։ Իհարկէ, չենք աշխատի այնքան, որքան աշխատում էր մեր հանգուցեալ հայրը, բայց այնուամենայնիւ ոչ մի աղքատութիւն չի

կարող լինել և չի էլ լինի մեզ համար։ Հանբերիր մի փոքր և դու կըտեսնես, որ ես մի բան կ'անեմ։ Այդ խօսքերը բաւական հանգստացրին խեղճ կնոջը։

Եւ իրաւ, ինչպէս, որ Ջեմսի 14 տարին նոր էր լրացել, նա մի բարձրահասակ, առողջ տղայ էր և բացի այդ, ժառանգել էր հօր աշխատասիրութիւնը և ուժեղ կամքը։

Միւս առաւօտեան Ջեմսը ժպտալով մօտեցաւ մօրը և ասաց նրան.

—Ինձ թուում է, մայրիկ, որ ես գտել եմ ելքը։ Չէ որ դու գիտես, որ շինութիւնների համար շատ աւազ է հարկաւոր գալիս։ Հանդուցեալ հայրիկը միշտ ասում էր, որ ամենալաւ աւազը ձեռք է բերւում այն աւազահանքում, որ գտնւում է քաղաքից կէս ժամ հեռաւորութեան վրայ։ Բայց այդ աւազահանքը բարձի թողի են արել ճանապարհի հեռաւորութեան պատճառով։ Հիմայ մենք էլ կըփորձենք. կըվերցնենք մի փոքրիկ սայլակ և Բեսսիի հետ կըսկսենք կրել այդ աւազից շինութիւնների համար։ Ես հաւատացած եմ, այնքան կ'աշխատենք, որ ոչ մի կարիք չենք ունենալ։

—Դա ձեր ուժից վեր աշխատանք է, սիրելի երեխայք, ասաց Մէրին։

—Իսկ դու մոռացել ես, մայրիկ, որ մենք ունենք մի օգնական էլ, մեր հաւատարիմ շունը—Բոբը։ Մենք կըլծենք նրան սայլակին, որ կանգնած է դուրսը։ Հանդուցեալ հայրիկը միշտ նրանով էր աւազ կրում։ Կըփորձենք. Բոբը խելօք և հասկացող շուն է։ Գուցէ մեզ յաջողուի սովորեցնել նրան մեր օգնութեամբ սայլը տանել։

—Փորձեցէք, երեխայք, փորձեցէք. գուցէ Աստուած մեզ չթողնի առանց խընամքի։

Բեսսին իսկոյն սկսեց աշխատել։ Երկու հին կաշուէ գօտուց և ժապաւէնից իսկոյն սարդ կարեց Բոբի համար։ Չափեցին. իսկը չափսին եղաւ։ Իսկ Ջեմսը այդ ժամանակամիջոցում դուրս բերեց սայլակը, սամին ուղղեց ու մաղութ քսեց անիւներին։ Յետոյ նա բերեց Բոբին ու լծեց.

—Բոբ, առաջ, առաջ, իմ հին ընկեր։

Բոբը հրաշալի շուն էր Նիւֆաունդլենդիայի ցեղից, բրչոտ, ահագին բարձրութեամբ, ուժեղ և միևնոյն ժամանակ բարի

ու անսահման հաւատարիմ իւր տէրերին։ Առաջ նա չէր հասկանում, թէ բանը ինչումն է. նա հարցական հայեացքով նայում էր մերթ Ջեմսին, մերթ Մէրիին, մերթ Բեսսիին, որոնք դուրս էին եկել նայելու Բոբի վարժութեան վրայ։ Բայց յետոյ կարծես գլխի ընկնելով, քաշեց իւր եռևից սայլակը։ Անցած մի ժամ, նա արդէն ընտելացել էր իւր նոր պարտականութեան հետ։ Նա կանգ էր առնում, կամ առաջ էր գնում, ծռւում էր աջ ու ձախ և այդ բոլորը անում էր Ջեմսի հրամանով։ Ամենքը հիացած էին։ Մէրիի վշտացած սրտում փայլեց ազօտ յոյսը։ Նա միայն վախենում էր, որ Ջեմսի բոլոր յոյսերը իզուր կ'անցնի, որովհետև աւազը չի ծախուի։

—Մի կասկածիր, մայրիկ, ասաց Ջեմսը —հանգուցեալ հայրիկը միշտ ասում էր, որ ամենալաւ աւազը գտնւում է Վինդսորի կողմում։ Բայց աւելի ապահով լինելու համար, ես առաջ կըգնամ պարոն Ջոնսոնի մօտ, որի շինութեան վրայ զոհուեց խեղճ հայրս։ Ես կըհարցնեմ նրան, չի՞ համաձայնի արդեօք վերցնել մեր աւազը։

—Գնա, գնա, իմ սիրելի զաւակս։ Աստուած յաջողութիւն տայ։

Ջեմսը արձակեց Բոբին և շտապեց պարոն Ջոնսոնի մօտ. նա գտաւ նրան տանը։ Նա համեստութեամբ առաջարկեց նրան իւր ծառայութիւնը, չմոռացաւ յիշել և այն, թէ ինչ էր ասում իւր հանգուցեալ հայրը Վինդսորի կոյտի մասին։

—Այո, Վինդսորի աւազը շատ լաւն է, բայց հեռու է կրելու համար։ Ահա ինչու այդ աւազի կոյտերը բարձի թողի են արուած։ Իմ աշխատաւորներից միայն մէկը չէր ծուլանում կրել այնտեղից—դա իմ խեղճ Օրելլին էր։ Բայց նա էլ կենդանի չէ։

—Ես նրա որդին եմ, բարի պարոն, ասաց Ջեմսը։ Նա յաճախ տանում էր ինձ իւր հետ այդ կոյտերի մօտ։

—Դու Օրելլիի որդին ես. հարցրեց զարմացած ճարտարապետը. լաւ, շատ ուրախ եմ քեզ հետ ծանօթանալուս համար։ Դու կարծես հօրդ ես քաշել և կըլինես նրա պէս լաւ աշխատաւոր։ Լաւ, ես համաձայն եմ, կրիր ինձ համար Վինդսորի կոյտից աւազ։ Ինչքան որ կրես, բոլորն էլ կ'առնուի

ու ես կը հրամայեմ իմ վերակացուին վճարել քեզ ուրիշներից մի երբոյդ ականով աւելի։ Ամբողջ տարին դու ինձ մօտ աշխատանք կ'ունենաս։ Իսկ այժմ ասա ինձ, ինչպէս էք կառավարւում խեղճ Օրելլիի մահից յետոյ։ Կենդանի է մայրդ։

—Կենդանի է, պարոն։ Ես ունեմ և մի քոյր Բեսսի անունով։ Նա լաւ աղջիկ է և կ'օգնէ ինձ աւագը կրելիս։ Մայրս ամբողջ օրը աշխատում է, կերակուր է եփում, տունը տեղը սրբում, կարում և մանում է։ Նա շատ էր վախենում, որ մենք ոչ մի միջոց չենք ունենալ ապրելու։ Բայց հիմայ ես նրան կը հանգստացնեմ։ Օ՜, ինչպէս նա կ'ուրախանայ։

—Լաւ, լաւ, արտասանեց պարոն Ջոնսոնը, սիրալիր շարժելով գլուխը, կընչանակէ դուք բոլորդ էլ քաշել էք ձեր հօրը։ Բոլորդ էլ լաւ, աշխատասէր մարդիկ էք։ Ուրախ եմ, շատ ուրախ։ Մայրիկիդ ասա, որ ես ձեզ միշտ կը հովանաւորեմ. ինչ էլ որ պատահի, թող դայ ուղղակի ինձ մօտ և ես կ'օգնեմ, ինչով որ կարող եմ։ Իսկ առայժմս վերցրու ահա այս փողը։ Քո հայրդ

շատ տարիներ ծառայել է ինձ աղնութեամբ և ես պարտականութիւն եմ համարում հոգալ նրա ընտանիքի մասին։ Ամեն ամիս կը գաս իմ գանձապահիս մօտ և փող կը ստանաս. այս կենսաթոշակ է, որը ես նշանակում եմ քո մօրը։ Շնորհակալութիւն մի անիր, իմ սիրելիս, գնա, Աստուած քեզ հետ։

Ջեմսը դոհ և ուրախ թողեց պարոն Ջոնսոնի բնակարանը։ Ուրախութիւնից և յուզմունքից վառվռում էին նրա աչքերը, երբ որ եկաւ տուն և բոլորը պատմեց մօրը։ Բեսսին սկսեց ուրախութիւնից վեր վեր թռչկոտել։ Իսկ խեղճ Մէրին արտասուալից աչքերը բարձրացրեց դէպի երկինք և արտասուեց։

—Շնորհակալ եմ քեզնից, ողորմած Աստուած. դու չես թողնում աղքատ որբերին, որովհետև քո ողորմութիւնը անսահման է։

—⁂—

ՎԻՆԴՕՈՒԻ ԱՒԱԶԱՀԱՆԸԸ.

Աշխատանքը եռում էր։ Ջեմսը, Բետսին և Բոբը օրուայ մէջ մի քանի անգամ գնում էին աւազահանքը և աւազ էին կրում պարոն Ջոնսոնի շինութիւնների համար։ Բոբը իւր պարտականութիւնը հիանալի կատարում էր, իհարկէ Ջեմսի և Բետսիի օգնութեամբ։ Ճիշտն ասած այդ աշխատանքը բաւականութիւն էր պատճառում երեխաներին։ Միայն Ջեմսը մի քիչ անհանգստանում էր, մտաբերելով ձմեռը, երբ պէտք է դադարէր աւազ կրելը։ Բայց մինչև ձմեռ շատ ժամանակ կար, որովհետև մայիս ամիսն էր։

Վինդօուի աւազահանքը, ինչպէս ասուած էր, գտնւում էր քաղաքից կէս ժամ հեռաւորութեան վրայ, հետևաբար չնայած Ջեմսի և Բետսիի աշխատութեան, նրանք չէին կարողանում օրուայ մէջ 3 սայլից աւելի կրել մինչև ճաշ և երեքն էլ ճաշից յետոյ։ Նրանք սովորաբար եթէ անձրև չէր լինում ճաշում էին աւազահանքում բաց

երկնքի տակ։ Սակայն նրանց ճաշը բաղկացած էր լինում հացից և պանրից, ինչպէս և Բոբինը, որը անբաժան գտնւում էր նրանց մօտ։ Բայց աշխատանքից յետոյ այդպիսի ճաշն էլ թւում էր նրանց համեղ։ Ճաշից յետոյ նրանք իսկոյն սկսում էին աշխատել։ Սովորաբար նրանք վազում էին աւազահանքի մօտ գտնւող գեղեցիկ պուրակի պարսպի մօտ և այնտեղից հիանում էին եղջիւրներով և այծեամներով, որոնք զբօսնում էին այնտեղ։ Այդ պուրակը շրջապատում էր մի հին դղեակ, որ հաւանօրէն պատկանում էր մի որ և իցէ երևելի լորդի։ Ցաճախ Ջեմսի մէջ ցանկութիւն էր յղանում անցնել այդ պարսպից, զբօսնել պուրակի սքանչելի ծառուղիներում, մօտիկից նայել կենդանիներին և իւր ձեռքով կերակրել նրանց, ինչպէս այդանում էին երկու փարթամ հագնուած երեխաներ—մի տղայ և մի աղջիկ։ Սրանք ամեն օր եղջերուներին կերակրում էին զանազան քաղցրաւենիքներով։ Հաւանական է, որ նրանք դղեակի տիրոջ երեխաներն էին։ Բայց Ջեմսը չէր ենթարկւում գայթակղութեան.

նա համեստ տղայ էր և բաւականանում էր նրանով, որ նայում էր հեռուից։ Զարդարուած երեխաները համարեա թէ չէին նըկատում Զեմսին և Բեատին, իսկ եթէ նկատում էլ էին, ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում նրանց վրայ։ Ինչ գործ ունէին նրանք խեղճ վարձկանների հետ։ Վատ եղանակին Զեմսը և Բեատին թաղնուում էին աւազահանքի ստորերկրեայ անցքերում։

Այդ աւազահանքը սկզբներում շատ եռանդով էր մշակուում և նրա միջով անցնում էին այնպիսի խոր և խճճուած նրբանցքներ, որ անծանօթ մարդը շատ հեշտութեամբ կըմոլորուէր նրանց մէջ։ Բոլոր ստորերկրեայ անցքերը հաղորդակցութիւն ունէին իրար հետ և կազմում էին անվերջ խառնաշփոթութիւն։ Նրանք յիշեցնում էին քարածուխի հանքերը։ Զեմսը, որ փոքր հասակից ուղեկցում էր հօրը դէպի այդ աւազահանքը, ճանաչում էր նրա ամեն մի քունջ ու պուճախը, բայց այնուամենայնիւ նա էլի խոյս էր տալիս մի տեղից, որ զանազանուում էր միւսներից աւելի խճճուած մուտքերով և իւր ճեղքուածներով։ Այդ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ճեղքուածները ունէին մի քանի սաժէն խորութիւն, այնպէս որ ընկնելու ժամանակ կարելի էր վիզ կոտրել, իսկ դուրս գալ այնտեղից առանց մէկի օգնութեան մտածելն անգամ աւելորդ էր։ Սկզբում այստեղ փայտէ սանդուղքներ էին շինուած, իսկ հիմայ նրանց հետքը մինչև անգամ չէր մնացել։ Նրանք կամ փթել էին կամ թէ չէ նրանց հաւաքել էին։ Ի լրացումն այդ ամենի բոլոր ճեղքուածները ու անցքերը բոլորովին մութն էին։ Զեմսը և Բեատին միշտ հեռու էին մնում վտանգաւոր տեղից, որտեղ երբէք չէին թափանցում արեգակի ճառագայթները։ Նրանք չէին հեռանում աւազահանքի վերևի յարկերից, որոնք մի փոքր լուսաւորուած էին ցերեկուայ աղօտ լոյսով։ Մինչև անգամ Բօբը այնքան զգոյշ էր, որ շատ խորը չէր գնում, նայած, որ նրան սաստիկ գրաւում էին վայրի ճագարները, որոնք վխտում էին աւազահանքի խորքերում. բայց Բօբը խելօք էր, նա հեռամուտ էր լինում ճագարներին միայն այն տեղում, որտեղ լոյս կար։

Զեմսը և Բեատին լաւ փոշ էին աշխա-

56027-66
ՊԵՏ ԿԱՌ ԳՐ. ԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Ում СССР
Ա. ԻՄ Գ. ՄԱՍԻՍՅԱՆ
Ա. ՍՎԻՆ ԳՅՈՒՂԱՄԱՍ

տում։ Նրանց ոչ թէ միայն ապրուստի էր բաւականացնում, այլ Մէրին մինչև անգամ խնայողութիւն էր անում ձմեռուայ համար, այնպէս որ ամառուայ վերջերում իւր ձեռքի տակ ունէր մի համեստ գումար։

— Այս ամենը լաւ է. ասաց մէկ անգամ Ջեմսը քրոջը, երբ գնում էին սայլի մօտով, որ քաշում էր Բոբը,—բայց այնուամենայնիւ, ես քեզ խղճում եմ, որ դու կատարում ես քեզ շատ անյարմար աշխատանք։

Սայլիկը դատարկ էր, որովհետև նրանք գնում էին քաղաք դէպի աւազահանքը։ Բոբը առաջ էր գնում շատ թեթև նրան օգնելու կարիք չկար։

— Իսկ ինչով է անյարմար. հարցրեց Բեատին.—միևնոյն չէ։

—Ո՛չ, միևնոյն չէ, աւազը փորել ու սայլով կրել, դա քեզ համար անյարմար գործ է։ Եթէ մեր Բոբը աւելի ուժեղ լինէր, ես միակ էլ կըկառավարէի, իսկ դու կըմտածէիր ծառայութեան մասին։ Է՛հ, եթէ կարողանայի մի էշ գնել, երկու անգամ աւելի

կարելի էր շահուել և դու իմ յետևից քաշ չէիր գալ։

—Այո, մտախոհ պատասխանեց Բեատին. էշը մեզ շատ օգտակար կըլինէր, բայց որտեղից գտնենք։

—Միւս դարնան մենք էշ կ'ունենանք. ես երաշխաւորում եմ դրա համար։ Ձմեռը Բոբը ինձ համար ածուխ կըկրի։ Նա անբաւական չի լինի, որովհետև եթէ ես էշ ունենամ, նա ազատուած կըլինի ամեն մի աշխատանքից։ Դէ, կանգնիր, Բոբ, հասանք, այսօրուայ աշխատանքի կէսը արուած է, կարող ենք ճաշել։

Բոբին արձակեցին. նա իրեն զգալով ազատ, սկսեց ուրախ-ուրախ թռչկոտալ ու հաղել ամբողջ տարածութեան վրայ. յետոյ նա կերաւ իւր բաժին հացը և մի հով տեղ պառկեց քնելու։

—Թող նրան, Բեատի, ասաց Ջեմսը. օրը շոգ է և Բոբը յոգնել է. թող նա մի փոքր հանգստանայ, իսկ մենք գնանք նայելու եղջերուներին։

Հիացան այծեամներով և եղջերուներով, վերադառնալով աւազահանքը սկսե-

ցին սայլակը լցնել։ Երբ արդէն հեռանում էին, նրանք նկատեցին, որ իրանց ետևից նայում էին երկու լաւ հագնուած երեխաներ, որոնց նոքա յաճախ տեսնում էին պուրակում։ Այդ նրանց չխանդարեց. նրանք ճանապարհ ընկան։ Դեռ էլի երեք անգամ նրանք կատարեցին իրանց սովորական ճանապարհորդութիւնը։ Ամեն ինչ իւր կարգով էր գնում։ Միայն մի բան զարմացնում էր Ջեմսին և Բեսսիին։

Ամեն անգամ, երբ գալիս էին աւազահանքը, Բոբը սկսում էր անհանգստութեամբ հաչել ու կաղկանձել և անդադար վազում էր դէպի այն կողմը, որտեղ գտնում էին վտանգաւոր ճեղքուածները։ Միևնոյնը կրկնուեց և միւս օրը։

—Ի՞նչ է պատահել նրան. ասաց Ջեմսը. այդպէս ես նրան երբէք չեմ տեսել։

—Հաւանական է, որ նա կամ ճագար է տեսել կամ նապաստակ, որը ընկել է աւազահանքը։ Ցիմար Բոբ, լռիր։

Բայց Բոբը չէր դադարում. նա կատաղի կերպով հաչում էր աւազահանքի մուտքի առաջ։

—Ո՛չ, այստեղ մի ինչ որ օտարոտի բան կայ. գնանք նրա ետևից, տեսնենք ինչ է պատահել։ Բոբը տեսնելով, որ նրանք մտադիր են իրան հետևել բարձր, ուրախուրախ սկսեց կոնձկոնձալ և ամբողջ թափով իրան ձգեց աւազահանքի մուտքից։ Երեխաները կանգնեցին և սկսեցին ուշադրութեամբ լսել։ Ցանկարծ նրանց ականջին հասան մարդու խոր հառաչանքներ։

—Օ՛, Աստուած, սա ինչ բան է. վախեցած բացականչեց Բեսսին.

—Բոբ, Բոբ, ետ դարձիր, գոռաց Ջեմսը։

Բոբը վերադարձաւ, բարձր հաչալով և կաղկանձելով։

—Լռիր, Բոբ, թող լսենք։

Նրանք լռեցին, նորից սկսեցին ականջ անել և այժմ արդէն բոլորովին պարզ ու որոշ լսելի էին ողբալի հառաչանքներ։

—Օ՛, Աստուած իմ, բացականչեց Ջեմսը. մարդ է դլորուել հանքահորի ճեղքը, ինչ անենք, քոյրիկ։

Բայց Բեսսին դունատուած ու վախից դողդողալով չէր կարողանում մի խօսք արտասանել։

—Ես ինձ մօտ հրահան ունեմ, շարունակեց Ջեմսը,—աւազահանքի մուտքի մօտ խարոյկ կըվառենք, որպէս զի վերադառնալիս չշեղուենք և բացի այդ կըվերցնենք ձեռքներիս մէկ-մէկ վառած ճիւղ։ Կասկած չկայ, որ այստեղ որ և է մէկը դլորուել է և երեկուանից չարչարւում է։ Բօբը մեզ նախազդուշացրել է այդ մասին։

Նրանք կարեցին սոճիի չոր ճիւղեր, խարոյկ վառեցին և յետոյ ջահերը ձեռքերին Բօբի ուղեկցութեամբ սկսեցին զգուշութեամբ իջնել ստորերկրեայ մութ անցքերով։ Աչ ու ձախ գտնւում էին խոր փոսեր, որտեղ առանց ջահի շատ հեշտութեամբ կարելի էր դլորուել։ Տասը րոպէից յետոյ Բօբը յանկարծ կանգնեց խոր ճեղքուածքի ծայրում։ Ջեմսը և Բեսսին մի ակնթարթում հասան և բարձրացրին ջահերը.

Հորի խորքից լսուեց ուրախ ձայն և նրանք տեսան այնտեղ երկու մարդու անորոշ ստուերագծեր։

—Էյ, գոռաց Ջեմսը.—Ո՞վ էք դուք և ի՞նչպէս էք ընկնել այստեղ։

—Ցեռոյ, յետոյ կըդատենք, լսուեց մի երիտասարդ ձայն հորից։

—Այժմ ազատեցէք մեզ, երեկուանից տանջւում ենք այս հորում։ Մենք մեռնում ենք քաղցից և ծարաւից։

—Դրան կարելի է օգնել. գոչեց Ջեմսը.—Ահա ձեզ հաց, այս էլ պանիր, այս էլ ձեզ մի փոքր ջուր։ Լաւ բռնեցէք, թէ չէ կըկտրուի։

—Շնորհակալ եմ ձեզնից, ի սրտէ շնորհակալ։ Լիւսի, քոյրիկս, կեր, տես ինչ համեղ է ... Բայց չէ՞ք կարող արդեօք դուք հանել մեզ այստեղից։

—Սպասեցէք մի փոքր, գոչեց Ջեմսը, ես կ'անցնեմ պուրակի պարսպից, կըվազեմ գղեակը և այնտեղ աղմուկ կըբարձրացնեմ, կարելի է ինձ ներեն իմ անցնելուս համար։

—Ի հարկէ, պատասխանեց հորից ձայնը. դրա համար ես երաշխաւոր եմ։ Հարցրէք միայն կառավարիչ Լամբերտին, ասացէք նրան, որ Էդգարտ և Լիւսին դլորուել են Վինդսորի հորի մէջ։ Ուրիշ ոչինչ։ Շուտ արէք, ի սէր Աստուծոյ, շուտ։

Ջեմսը և Բեսսին, առանց մի բոպէ կորցնելու, վազեցին դէպի պուրակ։ Բեսսին կանգնեց ցանկի մօտ, իսկ Ջեմսը մի ակնթարթում անցաւ միւս կողմը և շտապ վազեց դէպի ամրոց։ Այնտեղ բոլորը սաստիկ անհանգիստ էին։ Նա հէնց առաջին պատահած ծառային հարցրեց, որտեղ է կառավարիչ Լամբերտը։ Նրան իսկոյն ներս տարան վերջինիս սենեակը։

Լամբերտը տարիքն առած, յարգելի դէմքով մի մարդ էր. նա նոյնպէս սաստիկ վրդովուած էր։

—Ի՞նչ է հարկաւոր քեզ, տղայ, հարցրեց նա.—հէնց դու էիր պակաս։ Օ՜, Աստուած իմ, ինչ եղան երեխաները։

—Եթէ դուք փնտռում էք Էդգարին և Լիւսիին, ասաց Ջեմսը.—ես եկել եմ յայտնելու ձեզ, որ նրանք գլորուել են Վինդսորի հորը։ Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն։ Նրանք են ինձ ուղարկել ձեզ մօտ։ Տուէք սանդուղք կամ թոկ, մենք նրանց իսկոյն կը հանենք։

—Դու ասում ես գլորուել են հորը. դոչեց Լամբերտը։

—Օ՜, ի սէր Աստուծոյ, մի ծածկիր ինձանից ոչինչ. կենդանի՞ են նրանք, ասա։

—Նրանք կենդանի են և առողջ, պարոն կառավարիչ. ասաց Ջեմսը.—մի քիչ վախեցել են։

—Դէ, շուտ տար մեզ այնտեղ, ես քեզ առատ կը վարձատրեմ։ Աստուած իմ, բայց ինչպէս են նրանք ընկել այնտեղ։ Ա՜խ, չար երեխաներ, գնանք շուտով։ Հարկաւոր է նրանց հանել, առանց բոպէ կորցնելու։

Նա իսկոյն կանչեց ծառաներին, հրամայեց բերել սանդուղք, թոկեր և ջահեր։ Բոլորը Ջեմսի առաջնորդութեամբ ուղեւորուեցին դէպի հորը։ Զանցած տասը բոպէ Էդգարը և Լիւսին ազատուած էին իրանց բանտից։ Լամբերտը ուրախութիւնից իրան կորցրել էր։ Նա սեղմում էր նրանց իւր կրծքին և համբուրում։ Բայց միևնոյն ժամանակ նա չկարողացաւ իրան զսպել և մի թեթև նախատեց։

—Ա՜խ, դուք չարաճճիներ։ Ինչպէս վախեցրիք ինձ։ Ես արդէն կարծում էի, որ դուք խեղդուել էք Թեմզայում։ Ձեզ այստեղ փնտռել մաքով բոլորովին չէր անցնում։

Բայց ինչպէս ընկաք այստեղ, չեմ կարողանում հասկանալ։

—Շատ հասարակ կերպով։ Մենք ցանկացանք տեսնել, ինչ բան է Վինդսորի աւազահանքը։ Անցանք ցանկապատից, սկսեցինք շրջել այս անցքերով։ Ցանկարծ Լիւսին գոչեց և անյայտացաւ։ Վազեցի նրա ետևից և թրբրմի՝ ես էլ ընկայ միևնոյն փոսը։ Եթէ այս տղան չլինէր, այժմ մենք մեռած կըլինէինք այստեղ քաղցից ու ծարաւից։ Օտա՜ աբի, տղայ, ինչպէս է անունդ։ Մեր կեանքը դու ազատեցիր և ես չեմ ուզում քեզ պարտական մնալ։

—Այդ ինձ թողէք, պարոն Էդգար, ասաց կառավարիչը։ Իսկ ամենից առաջ վերադառնանք բոլորս էլ դղեակ։ Ժամանակ է ճաշելու։ Ես կարծում եմ դուք կարգին քաղցած էք։ Մեր փոքրիկ Լիւսիի դէմքը բոլորովին նուազած է։

—Ո՞հ, ինչպէս ես քաղցած եմ, գոչեց Լիւսին։ Եթէ այս տղան չձգէր հոչի մէջ մի կտոր հաց և պանիր, անկասկած ես կըմեռնէի քաղցից։

Բոլորեքեան, դրանց թուում Ջեմսը և

Բեսսին Բոբի հետ միասին, ուղևորուեցին դէպի պուրակ։ Սեղանը բաց էր արած կառավարչի սենեակում։ Ջեմսը և Բեսսին ուզում էին հրաժարուել, բայց Լամբերտը սաստիկ նրանց նոյնպէս նստել սեղանի մօտ ու չքաշուել, այլ ուտել, ինչքան ցանկանում են։ Ճոխ և համեղ ճաշից յետոյ Լամբերտը ասաց.

—Այժմ ժամանակ է մտածել, թէ ինչպէս շնորհակալութիւն անենք մեր չարաճըճինների փոքրիկ ազատիչներին։ Ասացէք, երեխաներ, ո՞վ էք դուք։ Ո՞վ են ձեր ծնողները։ Մի խօսքով ամեն ինչ մանրամասնօրէն պատմեցէք։

Ջեմսը հարկ չէր զգում ծածկելու։ Նա մանրամասն պատմեց իւր կեանքի պատմութիւնը, բոլոր ուրախութիւնները ու վշտերը, որ նա կրել էր։ Նա իւր պատմութիւնը վերջացրեց այս խօսքերով.

—Իսկ հիմայ երկու ցանկութիւն ունեմ; առաջինը՝ գնել մի էշ, որպէս զի աւելի շատ փոշ աշխատեմ, և երկրորդ՝ մի տեղ գտնել Բեսսիի համար, որպէս զի նա չպարապէր ուժից վեր աշխատանքով։

Լամբերտը քաղցրութեամբ ժպտաց.

—Դէհ, իմ սիրելի ընկեր, ասաց նա. —քո այդ երկու ցանկութիւնն էլ հեշտ է կատարել։ Դու հէնց այսօր կ'ունենաս մէկ լաւ էշ, իսկ ինչ վերաբերում է Բեատրիսին ....

—Նա կըմնայ մեզ մօտ, գոչեց Լիւսին, որը արդէն միջոց էր գտել մտերմանալ Բեատրիսի հետ։—Ձեզ վաղուց արդէն յայտնի է, Լամբերտ, որ ես ուզում էի ունենալ մի այսպիսի ընկերուհի։ Վճռուած է, Բեատրիսն կըմնայ մեզ մօտ։

—Ինչպէս ձեզ հաճելի է, օրիորդ Լիւսի, ասաց Լամբերտը ժպտալով.—ես դրա դէմ ոչինչ չունեմ։ Մինչև անդամ ես ինքս էի ուզում առաջարկել ձեզ այդ բանը։ Ձեր շորերը նրա վրայ լաւ կըլինի։ Համաձայն ես, Բեատրիս։

—Օ՛, ես ուրախութեամբ կըգնամ օրիորդ Լիւսիի մօտ, եթէ միայն մայրիկս համաձայնի։

—Դրա մասին ես հոգս կըտանեմ, ասաց Ջեմսը։ Եթէ ես ունենամ էշ, ուրեմն քո օգնութիւնը ինձ այլ ևս հարկաւոր չի լինի։ Բայց ես միայն մի պայման եմ դնում,

այն է, որ դու ամեն օր ժամի 12-ին երեւաս ցանկապատի մօտ։ Ինձ համար տխուր կըլինի, եթէ մենք դադարենք բոլորովին միմեանց տեսնելուց։

—Եւ այդ կարելի է. ոչ է քեզ խանգարում այստեղ քրոջդ մօտ հիւր գալուց։ Ես մինչև անդամ կարող եմ տալ քեզ պուրակի դռնակի բանալին, կարող ես գալ ամեն ժամանակ։

—Օ՛, ինչպէս շնորհակալ եմ ձեզանից, պարոն կառավարիչ։ Այս օրը իմ կեանքիս ամենաբախտաւոր օրն է։ Բեատրիսն տեղաւորուած է և ես էլ ունեմ էշ։ Ո՛չ, հարկաւոր է շտապել տուն և մեր խեղճ մօրը նոյնպէս ուրախացնել այս անսպասելի նորութիւններով։ Թոյլ տուէք ինձ հեռանալ, պարոն Լամբերտ։

—Եւ ես քեզ հետ կըգամ, Ջեմս, գոչեց Բեատրիսն,—ես էլ եմ ուզում տեսնել մայրիկին։

—Բայց չէ՞ որ դու հէնց այսօր կըվերադառնաս ինձ մօտ, անհանգստութեամբ հարցրեց Լիւսին։

—Ո՜հ, ուրախութեամբ, եթէ միայն մայրիկը համաձայնի ինձ թողնել։

—Դորա մասին մի կասկածէք, օրիորդ Լիւսի, հէնց այսօր երեկոյեան կըբերեմ ձեզ մօտ իմ քրոջս։ Իսկ առ այժմ ցտեսութիւն։ Կրկին շնորհակալութիւն ձեզնից ի բոլոր սրտէ, պարոն Լամբերտ։

Այսօր Ջեմսը և Բեատսին ի մեծ զարմանս Բօբի, աւաղ չէին կրում։ Նրանք երեքն էլ շտապում էին քաղաք դատարկ սայլակով։

Խեղճ Մէրին լսելով այսպիսի ուրախալի լուրեր, չկարողացաւ զսպել արտասուքը։ Նա շնորհակալութիւն էր անում Աստծուն խեղճ որբերին ուղարկած բարեբախտութեան համար։

ԽՆԱՄԱԿԱԼԸ

Աղնիւ Լամբերտը ինչ որ խոստացել էր, բոլորը ճշտութեամբ կատարեց։ Նա ընծայեց Ջեմսին մի հիանալի փոքրիկ էշ։ Ջեմսը այժմ շատ երջանիկ էր։ Նա հպարտութեամբ

գնում էր իւր էշի հետ, որը քաշում էր ծանր սայլակը. միայն երբեմն շրջիկացնում էր երկայն մտրակը։ Ցօմը, այդպէս անուանեց նա էշին—համարեա բոլորովին կարիք չէր զգում հրելու։ Նա իւր բոլոր ընկերներից աշխատասէր էր։ Ջեմսի աշխատութեան վարձը կրկնապատկուեց, և այդպիսով նա հնարաւորութիւն ունեցաւ ձեռք բերել մի մեծ սայլ։

Բեատսին նոյնպէս ընտելացաւ իւր նոր դրութեան հետ և բոլորովին բախտաւոր էր։ Դղեակում բոլորը նրան սիրում էին, մանաւանդ Լիւսին, որը դարձաւ նրա անբաժան ընկերուհին։ Նրանք ամբողջ օրը անց էին կացնում միասին, սովորում, զբօսնում, խաղում, կարում և քնում մի սենեակում։ Ամենայն օր Ջեմսը և Բեատսին տեսնում էին միմեանց հետ։ Երբոր լաւ եղանակ էր լինում, Կէսօրուայ մօտ Բեատսին մօտենում էր պուրակի ցանկապատին, որպէս զի խօսէ եղբօր հետ, իսկ վատ եղանակին, նա էր գալիս դղեակը և այնտեղ միշտ ընդունում էին նրան քաղցրութեամբ և առանց արդելքի թողնում էին քրոջ մօտ։ Էդդարը

իւր կողմից շատ սիրեց Ջեմսին և ամեն օր գալիս էր աւազահանքը նայելու նրա աշխատանքը և խօսելու նրա հետ։ Ջնայած ահագին տարբերութեանը, որ կար նրանց ունեցած կարողութեան ու դիրքի մէջ, երեխաները այնպէս մտերմացան իրար հետ, որ այդ զանազանութիւնը նրանց համար բոլորովին աննկատելի էր։ Նրանց թւում էր, որ իրենք շատ շուտուց ծանօթ են, թէև Էդգարը և Լիւսին հուչակաւոր ու հարուստ ծնողների որդիք էին, իսկ Ջեմսը և Բեռսին մի խեղճ վարձկանի երեխաներ։

Այսպէս անցաւ աշունը, անցաւ ձմեռը և կրկին սկսուեց գարունը։ Վրայ հասան պարզ տաք օրերը։ Դաշտերում ամեն ինչ կանաչեց։ Անտառները և պարտէզները լցուեցին թռչունների ծըլվըլոցով։ Մի անգամ Ջեմսը ըստ սովորութեան մօտեցաւ պուրակի ցանկապատին և տեսաւ Բեռսիին, որը արդէն սպասում էր նրան։ Այս անգամ նա մենակ էր. Ջեմսը նկատեց, որ նա մի տեսակ յուզուած է։

—Ի՞նչ է պատահել ձեզ, քոյրիկս, հարցրեց նա.—Դու լաց ես եղել։ Իսկ ո՞ւր են Էդգարը և Լիւսին։

—Նրանք չեն գայ այստեղ, եղբայր, ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ միւս օրը, գուցէ և երբեք։

—Բայց ինչո՞ւ. նեղացած չե՞ն արդեօք նրանք ինձնից մի որև է բանի համար։

—Աստուած ոչ անի, եղբայր, մենք այստեղ մեղք չունենք։ Եկել է կոմս Լուդլոուն, որ Էդգարի և Լիւսիի հօրեղբայրն է և խնամակալը, և ահա այն ժամանակից ամեն ինչ փոխուեց։ Մենք էլ չենք համարձակւում վազվըզել ու զուարճանալ առաջուայ պէս։ Բոլորն էլ տխրել են։ Կարծեմ նրան բոլորովին դուր չէ գալիս, որ ես գտնուում եմ դղեակում։ Նա ինձ վրայ խէթ աչքով է նայում։ Նրանից բոլորը վախենում են, Ջեմս։ Ես էլ եմ սաստիկ վախենում։

—Միթէ՞ նա այդքան սարսափելի է։

—Նա չար է։ Հասակը բարձր է, լղար, գունատ, իսկ նրա սև մազերը այնպէս փայլում են։ Էդգարը և Լիւսին նոյնպէս վախենում են նրանից։

—Իսկ նրանք ինչու՞ են վախենում։ Հօրեղբօրից վախենա՞լ։

—Քեզ ասում եմ, Ջեմս, որ նա նրանց խնամակալն է։ Ինձ Լիւսին ամեն ինչ պատմել է. նրանց հայր բարօնէտ Վինդեննիրը բոլորովին չէ կամեցել նրան խնամակալ նըշանակել. բայց սա մեռել է յանկարծակի, չկարողանալով կտակ թողնել։ Այն ժամանակ դատարանը նշանակել է կոմս Լուդլոուն խնամակալ, իբրև մօտիկ ազգականի։

—Նա ատում է Էդգարին և Լիւսիին, որովհետև եթէ նրանք չլինէին, բարօնէտ Վինդեննիրի ամբողջ հարստութիւնը կանցնէր իրան։ Նրանք սաստիկ վախենում են նրանից։

—Դա զարմանալի է. ախրութեամբ արտասանեց Ջեմսը։ Պէտք է, որ բարեկամները սիրեն միմեանց և ոչ թէ վախենան։ Խնամատարը չէ՞ արդեօք։

Բեասին յետ նայեց և ցնցուեց. նրանից մի քանի քայլ հեռաւորութեան վրայ կանգնած էր գրաֆ Լուդլոուն և իւր սարսափելի աչքերով նայում էր Ջեմսին. ակ-

ներև է նա դաղտնագողի մօտեցել էր և լսել նրանց խօսակցութիւնը։

—Ո՞վ է այս պատանին, հարցրեց նա տաժանելի լռութիւնից յետոյ.—Ձեմ կարող տանել զանազան անգործներին և թափառաշրջիկներին։

Բեասին բորբոքուեց և մի ակնթարթում նրա սարսուռը փոխուեց սաստիկ զայրոյթի։

—Սա ոչ անգործ է և ոչ թափառաշրջիկ. սա իմ եղբայր Ջեմսն է, որը աղնիւ աշխատաւոր է և ամբողջ օրերով բանում է և պահում մեր մօրը։ Ձեզ համար մեղք է վիրաւորել նրան. նա ազատել է մեծ փորձանքից ձեր եղբօր երեխաներին—Էդգարին և Լիւսիին։

—Այ .... ա՜յ .... ահա թէ ի՞նչ. հեգնօրէն արտասանեց կոմսը և չար ժպիտ երևաց նրա շրթունքների վրայ։

—Այդպէս է, այդպէս. դրանք այդ տեսակ են. կ՚անեն մի որ և իցէ ծառայութիւն և կ՚սկսեն քաշ գալ ամեն օր ու նայել, չի կարելի արդեօք մի որևէ բան թռցնել։

Ջեմսը կարմրեց բարկութիւնից. նրա դողդողացող աչքերը սխմուեցին իրար և աչքերը փայլեցին։ Նա խստութեամբ նայեց իրան վիրաւորողի վրայ և գոռաց.

—Պարոն, ես մտադրութիւն չունեմ կրել անարժան վիրաւորանքներ. բացի այդ դուք ոչ մի իրաւունք չունէք կարդադրութիւն անել ուրիշի կալուածքում։ Այս պուրակը պատկանում է ոչ թէ ձեզ, այլ իմ բարեկամ պարոն Էդգարին, որը երբէք ձեզ թոյլ չի տայ դուրս անել ինձ այստեղից։

—Ցանդուգն տղայ, գոռաց կոմսը. ես կըհրամայեմ ծեծել քեզ. գիտէս դու այդ։

—Ոչ, հօրեղբայր, այդ դուք չէք անի. ասաց աննկատելի կերպով մօտեցող Էդգարը։

Նա վազեց դէպի Ջեմսը և մեկնեց նրան իւր երկու ձեռքը.

—Քանի ես կենդանի եմ, ոչ ոք չի համարձակուի վիրաւորել քեզ։ Ես ներողութիւն եմ խնդրում քեզնից իմ հօրեղբօրս յանդգնութեան համար։ Դուք մի դուցէ չգիտէք, պարոն, շարունակում էր նա հըպարտութեամբ նայելով հօրեղբօր վրայ,— որ այս տղան ազատել է իմ և Լիւսիի

կեանքը։ Ընդունած նրան, որ սա հագին ունի մշակի հագուստ, իմ բարեկամն է և ես չեմ կարող համբերել, երբ որևէ մէկը իմ տան մէջ, իմ կալուածքում նրան վիրաւորի։ Լսո՞ւմ էք։

—Լաւ, լաւ, ասաց կոմսը, հեռանալով.—Սպասեցէք։ Նա շարունակում էր փընթփընթալ ինքն իրան և բարկութիւնից աչքերը կրակում էին։

—Բան ասաց ... Փրկել է կեանքը ... Հէ՞նց դրա համար էլ ես կրկնապատիկ ատում եմ նրան ... Նզովեալ ... Բայց սպասեցէք ... Ես ձեզ ցոյց կըտամ։

Էդգարը աշխատում էր հանգստացնել սաստիկ վիրաւորուած և բարկացած Ջեմսին։

—Ի՞նչ գործ ունես դու կոմս Լուդլոուց։ Ինչո՞ւ ես վախենում նրանից։ Արժէ՞ ուշադրութիւն դարձնել նրա վրայ։ Նա այստեղ ոչ մի նշանակութիւն չունի։ Մի քանի տարուց յետոյ իմ ձեռքի տակ կ՚առնեմ ամբողջ կալուածքի կառավարութիւնը և այն ժամանակ նրա ոտքը այստեղ չի մտնի։ Ես խնդրում եմ քեզնից, Ջեմս, արի մեզ

մօտ առաջուայ պէս և ոչ մի ուշադրութիւն մի դարձնի հօրեղբօրս վրայ։

Բայց Ջեմսը շատ խորն էր վիրաւորուած. նա շարժեց գլուխը և ասաց.

—Ես բոլորովին չեմ ցանկանում ենթարկուել նոր վիրաւորանքների։ Քանի որ կոմս Լուդլոուն դղեակումն է, ես այստեղ չեմ երևայ։ Մենք կարող ենք տեսնուել այստեղ ցանկապատի մօտ, և վերջապէս դուք կարող էք գալ աւաղահանքը, խօսմ նա չի արգելի ձեզ զբօսնել լաւ եղանակին։

Էդգարի և մինչև անգամ Բեատսիի յետագայ յորդորանքը ոչ մի օգուտ չունեցան։ Ջեմսը իւր ասածը արեց։

Այսպէս էլ վճռեցին, չնայած, որ Էդգարի համար մեծ վիրաւորանք էր, որ Ջեմսը չի հաւատում իրան, որ իսկապէս ինքն է դղեակի տէրը։

Անցաւ մի քանի օր։ Մեր երիտասարդ բարեկամները հանդիպում էին միմեանց ամեն օր ցանկապատի մօտ և մխիթարւում էին ուրախ խօսակցութեամբ։ Կոմս Լուդլոուն էլ չէին յիշում, նամանաւանդ, որ Էդգարը ենթադրում էր, թէ կոմսը այսօր

կամ էգուց կըմեկնի և այն ժամանակ ամեն ինչ կ'ընթանայ առաջուայ նման։ Բայց այդպէս չեղաւ։

Մէկ անգամ Ջեմսը ցանկապատի մօտ տեսաւ քրոջը չափազանց յուզուած ու արտասուած աչքերով։

—Ի՞նչ է պատահել. հարցրեց նա։ Չի վիրաւորել արդեօք քեզ մի սրևէ բանով կոմս Լուդլոուն։

—Օ՜, ոչ, գործը ինձ չի վերաբերում, այլ մեզ բոլորիս։ Կոմսը կամենում է Էդգարին և Լիւսիին այս քանի օրս ուղարկել Ֆրանսիա, մի ինչ որ դպրոց, որտեղ նրանք կըմնան մի քանի տարի։

—Եւ համաձայնեցի՞ն։

—Նրանք չէին համաձայնում. Էդգարը համբերութիւնից դուրս էր գալիս և ասում էր, որ նրանք կարող են սովորել և Անգլիայում, բայց հօրեղբայրը իւր ասածը արաւ։ Նրանք խորհուրդ արեցին Լամբերտի հետ և սա ասաց նրանց, որ կոմս Լուդլոուն խնամատարի իրաւունքով կարող է ստիպել նրանց։

—Բայց ինչու՞ համար է այդ։ Ուղղակի հասկանալ չեմ կարողանում։

—Զգիտեմ, չգիտեմ, եղբայր. Լիւսին ուղղակի յուսահատութեան մէջ է. նա աղաչում է, որ ես էլ գնամ իրանց հետ։ Լամբերտը ասում է, որ կոմսը այդ չի կարող արգելել։ Զգիտեմ կըհամաձայնի արդեօք մայրիկը, բայց ես կըգնայի։ Ես չեմ ուզում բաժանուել Լիւսիից։

—Այստեղ մի ինչ որ բան կայ։ Ինչ հարկ կայ տանել նրանց Ֆրանսիա, երբ Անգլիայումն էլ, ինչքան ցանկանաս, կան շատ լաւ դպրոցներ։ Եւ վերջապէս նրանք այնքան հարուստ են, որ կարող են վարձել ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որքան որ ուզում են։ Այստեղ ինչ որ խորհրդաւոր բան կայ. լաւ, Բեռսի, ես կըխօսեմ մայրիկի հետ, յուսով եմ, որ նա կըհամաձայնի։ Ցաւենայն դէպս լաւ կըլինի, եթէ գնաս նրանց հետ. մի որ և իցէ վտանգի դէպքում, իսկոյն դու կարող ես ինձ իմաց անել։

—Իսկ ինչ կ'անես դու այն ժամանակ, Ջեմս։

—Ես իսկոյն կըգամ պարոն Լամբերտի մօտ և նրան ամեն ինչ կըպատմեմ։ Նա կարող է հարկաւոր միջոցներ ձեռք առնել։

Նա հիանալի մարդ է և ամբողջ հոգով կապուած է Էդգարի և Լիւսիի հետ։ Խեղճեր, ինչպէս ցաւալի է բաժանուել ձեզանից։ Գնա, գնա, Բեռսի, ես իսկոյն կըբարձեմ սայլս և կըգնամ ամեն ինչ կըպատմեմ մայրիկին։

Էդգարի և Լիւսիի գնալու միտքը հանգիստ չէր տալիս Ջեմսին։ Նա դլուխը կոտրում էր, ցանկանալով հասկանալ թէ ինչ դաղտնի դիտաւորութիւն ունի Կոմսը, բայց վերջնականապէս ոչ մի եզրակացութեան չէր հանում։ Նա աղօտ կերպով միայն նախազդում էր, որ չար խնամատարը հընարել է մի ինչ որ վատ բան, որովհետև երեխաներին հեռացնելու ոչ մի լեգիտիմ հիմք չկար։

Թեմզայի ափով անցնելիս, Ջեմսը յանկարծ լսեց, որ իրան մէկը կանչում է։ Նա ետ նայեց։

—Էյ, փոքրիկ աւազակ, ծախող, դուռում էր մի ինչ որ կին, կանգնած պանդոկի շեմքում.—Աւազակ ծախում ես թէ ոչ.

Նա կանգնացրեց Ծոմին և ասաց.

—Ինչու չէ, կարելի է և ծախել։

Նրանք մի բոպէում համաձայնութիւն կայացրին և Ջեմսը մտնելով բակը, թափեց աւազը ցոյց տուած տեղում։ Կինը ասաց Ջեմսին.

—Հիմայ այստեղ պէտք է դայ որմնադիրը. նրան աւազ է հարկաւոր եթէ կարող ես, սպասիր պանդոկում. ես քեզ կըտամ մի ման դարեջուր և կ'աւելացնեմ մի կտոր էլ խոզի ապուխտ։

Ջեմսը ուրախութեամբ համաձայնեց. նա կապեց Ցօմին, պատուիրեց Բօբին պահպանել սայլը, իսկ ինքը մտաւ պանդոկ։ Այնտեղ սեղանի շուրջը նստած էին մօտ քսան մարդ. ամեն մէկի առաջ դրած էր մի-մի բաժակ։ Սենեակը լիքն էր ծխախոտի ծխով։ Ամեն մի սեղանի մօտից լսւում էր բարձր խօսակցութիւն։ Ջեմսը առանձին ուշադրութիւն չդարձրեց ոչ ոքի վրայ ու հանդիստ նստեց մի անկիւնում։ Շուտով մօտ բերեցին նրան տաք խոզի ապուխտի հետ դեռնախնձոր և մի բաժակ դարեջուր։ Նա սկսեց ուտել։ Էդգարի և Լիւսիի գնալու միտքը նրա գլխից դուրս չէր գալիս։ Ցանկարծ նա ցնցուեց։ Նա լսեց Կոմս Լուդ-

լօու անունը, որ արտասանուեց կից սեղաններից մէկի մօտ։ Նա աչքի տակով նայեց այն ուղղութեամբ և տեսաւ երկու մարդ ծովագնացի հագուստով։ Նրանց արտաքինը շատ անդուր էր։ Մէկը չէկ և երկար միրուքով ու չեչոտ երեսով, իսկ միւսը սև-սև ու ծուռը աչքով։ Նրանք խօսում էին իրլանդերէն։ Նա սրեց լսողութիւնը։ Ծովագնացները իհարկէ չէին կարող կասկածել, որ որևէ մէկը կըհետաքրքրուէր իրանց խօսակցութեամբ և խմելով դարեջուրը, անփոյթ շարունակում էին։

—Կոմս Լուդլօուն, ասում ես դու, հարցրեց չէկը միւսին։

—Այո, ուրիշ ոչ ոք։

—Առաջարկում է հարիւր ֆունտ երեխաներին Լօնդօնից Բալգրին անցկացնելու համար։

—Հարիւր ֆունտ։ Իհարկէ անցկացնելուց յետոյ։

—Համաձայն եմ. հէնց հիմայ կըգնամ և կընայեմ նաւը։

Յետոյ նրանք խօսեցին ուրիշ բանի

մասին։ Այդ խօսակցութիւնը շատ կասկածելի երևաց։

Ի՞նչ կընշանակէ այդ, մտածում էր նա. կոմս Լուդլոուն պատրաստում է տեղափոխել Էդդարին և Լիւսիին Ֆրանսիա, այն ինչ վարձում է նաև դէպի Բալդրին—Իրլանդիայի ծովափեայ քաղաքը։ Եւ ինչու այդպիսի սարսափելի դին—հարիւր ֆունտ։

—Նրա մտածմունքները ընդհատեցին տանտիկինը և օրմնադիրը, որը հէնց իսկոյն պատուիրեց նրան բերել երեք սայլ աւազ։

Երբ Ջեմսը, շնորհակալութիւնն յայտնելով պանդոկի տիրուհուց նրա հիւրասիրութեան և միջամտութեան համար, վեր կացաւ տեղից, ծովագնացները արդէն չը-կային։ Նա ուղևորուեց դէպի աւազահանքը, խորասուզուած մտածմունքների մէջ, թէ ինչ կընշանակէր այդ բոլորը։

Ցանկապատի մօտ նա հանդիպեց ոչ միայն Էդդարին, Լիւսիին և Բեատրիին, այլ և պարոն Լամբերտին։ Ջեմսը իսկոյն պատմեց ծովագնացների և նրանց խօսակցութեան մասին։ Լամբերտը մտածմունքի մէջ ընկաւ, բայց յետոյ ասաց.

—Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ դա։ Անգլիայում միայն մէկ Կոմս Լուդլոու չէ։ Հաւանական է, որ ծովագնացները խօսում էին ուրիշի մասին։ Եւ ուղիղ է յիշում եմ, որ նա Իրլանդիայում մի փոքրիկ կալուածք ունի, բայց մենք ինչ գործ ունենք դրա հետ։

Ջեմսը հանգստացաւ և սկսեց աշխատել։

Մի քանի օրից յետոյ Բեատրին յայտնեց նրան, որ վճռուած է միւս օրը ճանապարհուել։

—Ինքը Կոմս Լուդլոուն ուղեկցում է Էդդարին և Լիւսիին։ Բայց բացի ինձնից էլ ուրիշ ոչ ոք։ Նա հաղիւ հազ համաձայնեց ինձ վերցնել։

—Շատ, շատ կասկածելի է, ընդհատեց Ջեմսը.—Ուրեմն վաղը առաւօտեան.

—Այո, վաղը առաւօտեան մօտ ժամը 7-ին մայրիկի հետ եկէք այստեղ միաս բարև անելու։ Այդ ժամանակ Կոմս Լուդլոուն դեռ քնած կըլինի։

Այդպէս էլ վճռեցին.

⁂

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Այն նաւը, որով ճանապարհ ընկան Էդգարը, Լիւսին, Բեթսին և կոմս Լուդլօուն, կրում էր «Վիկտորիա» անունը։ Դա փոքրիկ, բայց շատ գեղեցիկ շինուած նոր նաւ էր։ Նաւախուցերը շքեղաղարդ էին. ամեն տեղ թաւշեայ թիկնոցներ, քանդակուած սեղաններ, նկարներ ու գորգեր։ Բայց եղանակը աքանչելի էր և ոչ ոք չէր ցանկանում նստել նաւախուցում։ Բոլորը նստել էին տախտակամածի վրայ և հիանում էին Լօնդօնի ու Թեմզայի տեսարաններով։ Թեմզա գետի վրայ երևում էին անթիւ ու անհամար նաւեր, որոնք գնում էին հոսանքի ուղղութեամբ կամ հակառակ։ Երեխաները, որոնք սկզբում տխուր և լուռ էին, հետզհետէ բացուեցին և ուրախացան։ Նրանք խօսակցում էին իրար հետ, յիշելով անցեալը և հանգստացնում էին միմեանց նրանով, որ երկու տարուց յետոյ վերադառնալու են։ Բազմաթիւ նաւերի միջից նրանք

չնկատեցին որ իրանց ետևից լողում է մէկ հին, ոգեղ մի կայմանի նաւակ, այն ինչ կոմս Լուդլօուն աչքը նրանից չէր հեռացնում։ Սովորական ճաշի ժամին նա շատ քաղցրութեամբ առաջարկեց ճաշել նաւախուցում։ Ճաշը հիանալի էր։ Կոմսը սովորականից դուրս սիրալի էր և խօսող։

Նա հիւրասիրում էր երեխաներին մի ինչ որ շատ համեղ և լաւ գինով, որը նրանք խմում էին բաւականութեամբ։ Բայց ճաշից յետոյ նրանք բոլորն էլ իրանց շատ ծանր զգացին։ Քունը նրանց յաղթահարեց և երեքն էլ ննջեցին իրանց բազկաթոռների մէջ։ Զանցած 10 րոպէ, նրանք արդէն քնած էին մեռելային քնով։ Կոմս Լուդլօուն չարախնդութեամբ ժպտաց և դուրս եկաւ տախտակամածի վրայ. նա նշան արեց իրանց հետևող նաւակի ղեկավարին, որ իսկոյն հաւասարուեց նաւի հետ, և շարունակում էր իւր ճանապարհը դէպի Ֆրանսիայի ափերը, այն ինչ նաւակը դուրս գալով ծովի մէջ ծռուեց հիւսիս—արևելք դէպի Իրլանդիայի կողմը։

Էդգարը, Լիւսին և Բեթսին զարթնեցին

միայն մեռս առաւօտեան, երբ արևը բարձ-
բացել էր։ Էդգարը առաջինն խելքի եկաւ
և զարմացմամբ նայեց շուրջը։ Դա այն
չքեղազարդ նաւախուցը չէր, որի մէջ նրանք
ճաշեցին անցեալ օրը, դա մի կեղտոտ,
տգեղ, մութ բուն էր փոքրիկ լուսամուտ-
ներով, որի միջից հազիւ հազ երևում էր
անսահման ծովը։ Պատերը բոլորովին մերկ
էին, սեղանը և նստարանները ամենահա-
սարակ և նոյնպէս կեղտոտ ինչպէս պատերը։

—Սա ինչ է նշանակում. գոռաց Էդ-
գարը և մօտեցաւ փոքրիկ դռնակին, որը
կողպուած էր բալանիով.—Այս ինչ է, գոչեց
նա,—մենք փակուած ենք, մենք գերի ենք։

—Օ՜, ես հիմայ մի բան կ'իմանամ։—
Կոմս Լուդլոուն մի ինչ որ վատ բան է
սարքել. արտասանեց վախից դողալով Բեռ-
սին։ Ջեմսը բոլորովին իրաւացի էր։

Էդգարը բոլոր ոյժով սկսեց բաղխել
դուռը։ Երկար ժամանակ ոչ ոք ձայն չէր
հանում։ Բայց վերջապէս լսուեց, սանդուղ-
քից մէկը իջնում է։ Բանալին չըխկաց և
շէմքում երևաց մի պառաւ կին, բարկա-
ցած կնճռոտ երեսով ու խիտ յօնքերով,

որոնց տակից փայլում էին չարութեամբ լի
աչքերը։ Նա ձեռքերում բռնած ունէր մի
կողով պաշար։ Ոչ մի խօսք չարտասանելով
նա դրեց սեղանի վրայ մի կտոր սառը միս,
երեք պատառ հաց ու կաւէ ամանով ջուր։

Երեխաները նայում էին պառաւի վրայ
սարսափած և մասամբ հետաքրքրութեամբ։

—Ի՞նչ կընշանակէ այս բոլորը. հար-
ցրեց Էդգարը, կանգնելով դռան մէջ և
փակելով նրա ճանապարհը։—Ես չեմ հե-
ռանայ տեղից, մինչև դու ինձ չասես ուր է
կոմս Լուդլոուն մեր խնամատարը։

Պառաւը ոչ մի խօսք չպատասխանեց
և ինչ որ փնթփնթաց քթի տակ։

—Ասա, գոռաց Էդգարը։

Պատասխանի տեղ նա մօտեցաւ նրան,
բռնեց իւր ցամաքած ձեռքերով ու քաշեց
մի կողմ։ Յետոյ նա արագ փակեց դուռը
ու կողպեց։

—Սա ինչ կընշանակէ, կրկին գոչեց
Էդգարը.—Նա կամ չի ուզում խօսել, կամ
չի հասկանում անգլիերէն։

—Վերջինը ուղիղ է, ասաց Բեռսին.
հաւանական է, նա Իրլանդացի է, յամենայն

դէպս նա ձեզ հայհոյեց, Էդգար, Իրլանդերէն ասելով, «յանդուգն տղայ»։

—Ուրեմն դու հասկանում ես այդ լեզուն, Բեսսի, հարցրեց Էդգարը։

—Մեր հայրը Իրլանդացի էր։ Ինչպէս չհասկանամ ես, օգտուենք դրանով, Էդգար։ Բոլոր ժամանակ մենք հո չենք մնայ փակուած։ Մենք կլսենք, ինչ որ խօսում են մեր մասին և ցոյց կըտանք, որ ոչինչ չգիտենք։

—Բայց ինչ է ուզում անել մեզ հետ հօրեղբայրս, դոչեց Էլիսին։

—Նա հօ չի վճռել սպանել, դրա համար էլ նա ինքը վտանգի է ենթարկում իւր գլուխը։ Մեզ ոչինչ չի մնում անել, եթէ ոչ միայն համբերել և սպասել թէ ինչ կըլինի։

Նրանք գլուխ էին կոտրում, որ հասկանան, թէ ինչ են ուզում անել իրանց հետ։ Միայն մի բան էին նրանք պարզ հասկանում, որ Կոմսը գինու հետ խառնած տուել է նրանց քնեցնող մի բան ու քնած ժամանակ տեղափոխել է նրանց մի նաւից միւսը, որը գնում էր ոչ թէ Ֆրանսիայի ափերը, այլ հիւսիս արևելք–Իրլան-

դիայի ափերը։ Այդ բանը Էդգարը ճշտութեամբ որոշեց արեգակից։

Հաւանական է, որ կոմսը ուզում է ինչ էլ որ լինի հեռացնի մեզ ու տիրապետի մեր ողորմած հօր ժառանգութիւնը։

—Բայց այն ժամանակ նրան հարկաւոր կըլինէր մեզ սպանել, այն ինչ մենք կենդանի ենք, ասաց Էլիսին։

—Ո՞վ գիտէ։ Մի գուցէ նա ուզում է մեր ամբողջ կեանքը գերութեան մէջ պահի։—Դրանից նա շահ չունի։ Մի քանի տարուց յետոյ, դու կըլինես չափահաս և այն ժամանակ նա հարկադրուած կըլինի կամ տալ քեզ կարողութիւնդ, կամ ապացուցանել, որ դու մեռած ես։—Բայց ինչ է հնարել նա այդ դէպքում.

—Համբերենք մի փոքր, ասաց Բեսսին. ես չեմ կասկածում, որ շուտով ամեն ինչ կըպարզուի, ուր էլ որ տանելու լինին, Աստուած մեզ չի թողնի։ Հպատակուենք մեր վիճակին և չտրտնջանք։

Անցան մի քանի տաժանելի օրեր։ Առաջուայ պէս երեխաներին պահում էին բանտարկութեան մէջ։ Միևնոյն չար կինը

օրը երեք անգամ երևում էր և մռայլ լռութեամբ դնում սեղանի վրայ աղքատիկ նախաճաշը, ճաշը և ընթրիքը։ Այդ բոլոր ժամանակամիջոցում նա ոչ մի խօսք չասաց և մինչև անգամ չնայեց երեխաների վրայ։ Վերջապէս հինգերորդ թէ վեցերորդ օրը նաւը գնացքը դանդաղեցրեց։ Տախտակամածից լսւում էին վաղոցի ձայներ, իրարանցում, շղթաների շառաչիւն, որոնց վրայ կապուած էին խարիսխները, ու առադաստների հաւաքելու ձայնը։ Նաւը կանգնեց մռայլ ու ժայռոտ ափի մօտ, որ զրկուած էր ամեն տեսակ բուսականութիւնից։ Մերկ ժայռերը խիստ ծանր տպաւորութիւն էին թողնում, իսկը այնպէս, ինչպէս և հին դղեակի մռայլ աշտարակները, որի տասնաւոր գաղթները լուսաւորուած էին մայր մտնող արևի ծիրանագոյն ճառագայթներով։ Երեխաները լուսամուտից տեսան, որ նաւակին մօտենում է մի մակոյկ, որի մէջ նստած է մի ինչ որ տարիքն առած սև շորերով մարդ։ Մի քանի րոպէ անցած լսուեց բացւող փակի ձայնը և նաւախուցը մտաւ միևնոյն պառաւը մակոյկով մօտեցող մարդու ուղեկցութեամբ։

—Երեխայք, ասաց նա անգլիերէն.— Դուրս եկէք։ Ձեր ճանապարհորդութիւնը վերջացած է։

—Սա մի՞թէ Ֆրանսիան է. հարցրեց Էդգարը.

—Օ՜, ոչ Ֆրանսիան հեռու է և դժուար թէ դուք երբևիցէ ընկնիք այնտեղ։ Սակայն ինձ խիստ արգելուած է տալ ձեզ որևէ բացատրութիւն ու ձեզ հետ երկար խօսակցութիւն ունենալ։ Դուրս եկէք։

Ուրիշ հնար չկար։ Բոլորը դուրս եկան տախտակամածի վրայ, իսկ այնտեղից միևնոյն սևուկ պարոնի առաջնորդութեամբ տեղափոխուեցին մակոյկը, որը իսկոյն ափից հեռացաւ։

Տխուր տեսարան էր ներկայացնում ափը, իսկ աւելի տխուր-դղեակը.

—Արդեօք այստեղ չեն փակելու մեզ հարցրեց Էդգարը.

—Դուք գուշակեցիք. մռայլ պատասխանեց նրանց ուղեկիցը։

—Բայց ինչի՞ համար։ Մենք ինչ ենք արել. և ով է այդպէս կարգադրել.

—Խնդրում եմ ձեզ, մի ձանձրացնէք

ինձ ձեր հարցմունքներով միայն մեկ բան կարող եմ ասել ձեզ, որ դուք բոլորդ կապրիք այն աշտարակում, որ տեսնում էք ձեր առջևը, երկար ու անորոշ ժամանակ։

—Օ՜, ես գիտեմ, բացականչեց Լիսին այդ սարքել է չար հօրեղբայրս. նա ուզում է տիրապետել մեր կալուածքին. բայց Աստուած զօրեղ է ամեն մի արգելքներից և քարէ պարսպից։ Եթէ նրան հաճելի լինի, մենք կ՚ազատուենք աւելի շուտ, քան դուք կարծում էք։

Ուղեկիցը արհամարանքով ժպտաց և միայն թափահարեց ուսերը։ Նաւակը մօտեցաւ ափին։ Այնտեղ խեղճ դիրքերին սպասում էր չորս փոքրիկ երկայնամազ ձիերով լծուած կառքը։ Վեց ծառաներ ձիով ուղեկցում էին կառքին։ Անցնելով ժայռոտ ծովափի նեղ ճանապարհով, Էդգարը տեսաւ մի գիւղ, որը այնքան էլ հեռու չէր մռայլ դղեակից։

—Այստեղ էլ մարդիկ են ապրում, մտածեց նա. հետևապէս հնարաւորութիւն կայ այսպէս թէ այնպէս տեղեկութիւն տալ Լօնդօն իրենց մասին։

Դղեակը շրջապատուած էր կրկնակի պարիսպով. դարպասի մօտ կանգնած էին պահապաններ։ Ներսից նա աւելի մռայլ էր քան դրսից։ Նեղ բակը շրջապատուած էր բարձր քարէ շինութիւններով, որոնց լուսամուտները փոքրիկ էին և վանդակապատ։ Իսկապէս այդ բոլորը բանդ էին յիշեցնում։ Ճնշուած սրտով երեխաները հետևում էին իրենց մռայլ ուղեկցին։ Նա տարաւ նրանց նեղ զառիվայր սանդուղքներով աշտարակի ծայրը։ Նա բաց արեց դուռը, որ փակած էր ամուր փականքով։ Նրանք մտան իրենց ապագայ բանտը։ Սակայն նա այնքան էլ սարսափելի չերևաց, ինչպէս իրենք սպասում էին։ Երկու շատ գեղեցիկ կահաւորուած սենեակներ գերիների տրամադրութեան տակ էին։ Էդգարը մօտեցաւ բաց լուսամուտին և նայեց այնտեղից, բայց խիզոն ետ ցատկեց։ Բարձրութիւնը սարսափելի էր։ Աշտարակի ստորոտում սրածայր ալբանիդէ ժայռեր, իսկ յետոյ—անսահման ծովը։

—Փախուստի մասին մի մտածէք. ծաղրելով ասաց սև հագնուած մարդը, կարծես

հասկանալով Էդգարի միտքը։ Դրանով դուք միայն կըվատացնեք ձեր դրութիւնը։ Նա դուրս եկաւ սենեակից։ Երեխաները լսեցին դռան կողպուելու ձայնը։ Նրանք մնացին մենակ ամենածանր տրամադրութեան մէջ։ Նրանց սիրտը ճմլւում էր տխրութիւնից։ Բեսսին առաջինն ուշքի եկաւ և ասաց.

—Ինչու՞ ենք մենք տխրում։ Դժուար թէ կոմս Լուդլոուն մտադիր լինի մեզ սպանել։ Ինչ է նրա նպատակը ես չգիտեմ, բայց Աստուած չի թողնի մեզ։ Միայն ցոյց չտանք, որ ես գիտեմ իրլանդերէն։ Մնում է մեզ յաջողուի մի բան իմանալ և միջոց գտնել ազատուելու այս տեղից։ Միայն մեզ պահենք համեստ և ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չտանք։ Ամեն տեղ մարդիկ են։ Երևի դղեակում գտնուող ծառաների մէջ կըգտնուի մի որևէ բարի մարդ, որ կըխղճայ մեզ. դուցէ ձկնորսի մէկը նաւակով անցնի մեր լուսամուտի տակից, այն ժամանակ մենք նրան տոմսակ կըձգենք։

—Իսկ նա մեզ կըմատնի. դառնութեամբ արտասանեց Էդգարը։

Բայց և այնպէս այն ժամանակ մենք

ոչինչ չենք կորցնի, այլ կարող ենք մի բան վաստակել։ Մի անհանգստանաք. ես միջոց կըգտնեմ յայտնել եղբօրս Ջեմսին։

Կոմս Լուդլոուն երկար չի տանի իր յաղթանակը։

Բեսսիի խօսքերը ազդեցութիւն ունեցան։ Էդգարը և Լիւսին մի փոքր ուրախացան։ Շուտով բերին նրանց համար ընթրիք, որը աւելի հանգստացրեց նրանց։ Ընթրիք բերող ծառաները խօսում էին իրլանդերէն։ Անցաւ մի քանի օր։ Երեխաներին սենեակից ոչ մի տեղ դուրս չէին թողնում։ Երևում էր՝ բանտապահը նրանց փորձում էր։ Սակայն համոզուելով, որ նրանք երբեք չեն հակառակում և իրենց հանգարտ են պահում, նա մէկ անգամ մտաւ նրանց մօտ և ասեց.

—Ձէք ուզենայ զբօսնել բակում. եթէ սորանից յետոյ էլ դուք պահէք ձեզ այսպէս հանգարտ, ես թոյլ կըտամ ձեզ ամեն օր զբօսնել, բայց միայն բակում։

—Շատ շնորհակալ ենք ձեզնից. մենք բաւականութեամբ կըզբօսնենք, թէկուզ հէնց բակում։

Նրանք երեքն էլ գնացին կառավարչի եռևից։

Միայն հիմայ նրանք հասկացան ծառաների խօսակցութիւնից, որ սա դղեակի կառավարիչն է։

Նրանք դուրս եկան նեղ, մռայլ դրանիդով սալայատակած բակը։ Դարպասի մօտ կանգնած էին պահապանները, որոնց մօտ խմբուել էին մի քանի անգործ ծառաներ։ Բոլորը հետաքրքրութեամբ նայում էին զբօսնող երեխաներին. Բէտսին մի քանի դէմքերի վրայ նկատեց ցաւակցութիւն. այդ նրան քաջութիւն տուեց. նա աննկատելի շշնջաց Էդգարին և Լիւսիին.

—Զբօսնէք և ինձ վրայ ոչ մի ուշադրութիւն չդարձնէք։ Նա նստեց դարպասից ոչ հեռու մի քարէ թումբի վրայ. այնպէս որ կարող էր լսել ծառաների ասած ամեն մի խօսքը։ Ցոյց տալով, որ հիւանդ է, նա բռնեց գլուխը ձեռքերով, իսկ ականջները սրեց։ Ոչ մի խօսք նա բաց չթողեց։ Ծառաները խօսում էին իրլանդերէն։

—Խեղճ երեխաներ, ասաց մէկը.

—Ինչու, հարցրեց միւսը.—ինչով է նրանց համար այստեղ վատ.

—Քեզ էր հարկաւոր նստեցնել բանտը։

—Այդ մեր գործը չէ. դա մեր պարոնի գործն է. կոմս Լուդլոուն լաւ գիտէ թէ ինչ է անում։ Միայն չեմ հասկանում թէ նա դրանից ինչ օգուտ ունի։

—Իսկ ես հասկանում եմ։

—Պատմիր, պատմիր, Մելվիլ։

—Միայն տեսէք, չմատնէք ինձ.

—Չենք մատնի, չենք մատնի, ինչ ես ասում.

—Ես պատահմամբ լսել եմ կոմս Լուդլոու և մեր կառավարիչ Ջօն Վիլլէտի խօսակցութիւնը։ Կոմսը ուզում է երեխաներին արգելուած պահել այստեղ, մինչև նրանց կեանքի վերջը, իսկ ինքը ձեռք կբերի նրանց ժառանգութիւնը։ Նա արդէն միջոց է գտել ապացուցանելու դատարանի առաջ, որ երեխաները մեռել են։ Ջօն Վիլլէտը երդուել է, որ երեխաներին դուրս չի թողնի։ Սակայն կոմսը նրան մահ սպառնաց, եթէ նա իրեն դաւաճանի։ Օ՜, մեր կոմսը ամեն ինչի ընդունակ է։

Այսպէս նրանք իրենց կեանքը պէտք է անցկացնեն Բալդրինում։

Այդ ժամանակ երեւաց կառավարիչը։

—Ի՞նչ է այստեղ թափառում, դուռաց նա ծառաների վրայ։ Քանի անգամ ես ասել եմ ձեզ, որ չհամարձակուէք խօսել պահապանների հետ։ Գնացէք այստեղից։

Ծառաները ցրուեցին զանազան կողմեր և անյայտացան բակը շրջապատող շինութիւնների մէջ։

—Երեխայք, դուռաց Ջեմս Վիլլէսը.— բաւական զբօսնեցիք, ժամանակ է տուն գնալու։

Երեխաները հնազանդեցին։ Սենեակում արդէն պատրաստ էր ընթրիքը։ Երբ դուռը ծածկուեց, Բեատին ուրախ դէմքով աչքով արեց Էդգարին և Լիւսիին ու շշնջաց.

—Ես իմացայ այն, ինչ մեզ հարկաւոր էր։

—Ի՞նչ, ինչ.

—Մենք դան ում ենք Բալդրինում. կոմս Լուդլոու դղեակում, որը կամենալով ձեռք բերել ձեր հարստութիւնը, վճռել է պահել ձեզ այստեղ մինչև ձեր կեանքի վերջը։ Նա ձեռքին ունի մի ինչ որ ապա-

ցոյցներ ձեր մահուան համար։ Կառավարչին կոչում են Ջոն Վիլլէս, իսկ ծառային, որ գիտէ բոլորը-Մելվիլ։

Երեխաները երկար ժամանակ խորհուրդ էին անում, թէ ինչպէս օգտուին այդ թանկագին լուրերով. և վերջապէս վճռեցին հետեւալը։ Էդգարը այդ բոլորի մասին կըգրի պարոն Լամբերտին, և նամակը կըձգի ծովից անցնող հէնց առաջին պատահած ձկնորսին. նամակ գրելու համար նրանք ոչ մի պակասութիւն չունէին։ Առհասարակ մեր գերիներին լաւ էին պահում. միայն մէկ բանն էր վատ—նրանք կողպուած էին։ Նամակը գրուած էր։ Ամբողջ ժամերով նստում էր Էդգարը լուսամուտի մօտ և սպասում ձըկնորսի ցանկալի նաւակին։ Վերջապէս նա երեւաց։ Նրա մէջ նստած երիտասարդ ձկնորսը նկատեց նշանները, որ տալիս էին Էդգարը, Լիւսին և Բեատին. սատիկ շարժելով թաշկինակները։ Նա կանգնեցրեց նաւակը։ Այն ժամանակ Էդգարը լուսամուտից ցած ձգեց նամակը։ Նա օդի մէջ պտոյտներ անելով իջաւ ծովափի ժայռերից մէկի վերայ։ Երեխաները ուրախութեամբ

տեսնում էին իրանց աշտարակի բարձրութիւնից, ինչպէս ձկնորսը մօտենում էր ափին։ Ինչ եղաւ յետոյ, նրանք չկարողացան նայել։ Գոնէ նա արդեօք նամակը, հասցրեց արդեօք նշանակած տեղը։

Անցաւ յոգնեցուցիչ սպասողական շաբաթը։ Երեխաներին ամեն օր թողնում էին զբօսնել բակում, բայց հիմայ բացի պահապաններից նրանք ոչ ոքի չէին տեսնում։ Միայն մէկ անգամ ներքին յարկի լուսամուտում երևաց մէկ 15 տարեկան տղայ— Ջօն Վիլլէտի որդին։ Բայց հայրը իսկոյն գոռաց նրան.

—Հենրի, դու մոռացար, ինչ որ ես քեզ հրամայել եմ։

Տղան անյայտացաւ, չնայելով այդ՝ Բեռսին յիշեց նրա դէմքը։

Անցաւ էլի մէկ շաբաթ. մէկ անգամ երեկոյեան, երբ երեխաները սովորական ձանձրութեամբ թափառում էին բակում, դարպասը բացուեց և մտան երկու տղայ. նրանցից մէկը Հենրին էր, կառավարչի որդին, իսկ միւսը.... Բեռսին նայեց նրա վրայ և գոռաց, պահապանները վազեցին

նրա մօտ, նա գիտութեամբ ծակեց քորոցով մատը և ցոյց տուեց պահապաններին արնոտուած մատը։ Դա նրանց հանգստացրեց։ Իսկ ո՞վ էր մտնող տղաներից միւսը։

ՓԱԽՈՒՍՏ

Մինչ դեռ դերիները գլուխ էին կոտրում, թէ ինչպէս ազատուեն, Լօնդօնում նրանց ընկերները քնած չէին։

Ջեմսը քրոջից և Էդգարից ոչ մի լուր չստանալու պատճառով սկսեց սաստիկ անհանգստանալ։ Նրա կասկածները կոմս Լուդլօու վատ մտադրութիւնների վերաբերմամբ հանգիստ չէին տալիս նրան ոչ ցերեկը, ոչ գիշերը։ Նա յաճախ այցելում էր պարոն Լամբերտին, բայց սա էլ ոչ մի մխիթարական բան չէր հաղորդում։ Մէկ անգամ մտնելով ազնիւ կառավարչի սենեակը, նա գտաւ նրան սաստիկ յուզուած, սփոթնած։ Նրա աչքերը սաստիկ լացակրկնած էին, նա ձեռքում բռնած ունէր լրագիր։

—Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն Լամբերտ, հարցրեց Ջեմսը։ Նա ձեռքերով ծածկեց երեսը և լռութեամբ մեկնեց նրան լրագիրը։ Ջեմսը կարդաց լրագիրը և յանկարծ գունատուեց։—Անկարելի բան է, գոչեց նա։

Լրագրում յայտարարուած էր. «Վիկտորիա» նաւի խորտակման մասին Ֆրանսիայի ափերի մօտ, բոլոր ճանապարհորդներով ի միջի այլոց երեք երեխաներով, որով նրանց հօրեղբայրը—կոմս Լուդլօուն տանում էր Փարիզ տեղաւորելու դպրոցում։ Ինքը կոմս Լուդլօուն յաջողութեամբ դուրս է եկել ափը. նաւի ծառայողները նոյնպէս ազատուած են նաւի բեկորների վրայ։ Անբախտութիւնը վերագրւում էր նաւագնացների վերին աստիճանի անփութութեան, որովհետև ոչ մի փոթորիկ չի եղել և նաւը կործանուել է օրը ցերեկով, զարնուելով վիմուտի, որ լաւ յայտնի է Լամանշով անցնող բոլոր ծովագնացներին։ Բացի այդ էլ այդտեղ կանգնացրած է նշան։ Վերջում լրագիրը յայտնում էր, որ կոմս Լուդլօուն ինքն իրեն կորցրել է և ուզում է «Վիկտորիա»

նաւի բոլոր ծառայողներին քրէական պատասխանատուութեան ենթարկէ։

—Եւ դուք հաւատո՞ւմ էք այս խաբէբայութեանը. գոռաց Ջեմսը։

Լամբերտը զարմացմամբ նայեց նրա վրայ.

—Ասացէք, պարոն Լամբերտ, համարո՞ւմ էք դուք կոմս Լուդլօուն ընդունակ սպանելու երեք անմեղ երեխաների։

Ոչ, դրականապէս ոչ։ Նա չար, բայց վախկոտ մարդ է. նա ընդունակ է խաբեբայութեան, խաբդախութեան, եթէ համոզուած է, որ այդ ծածուկ կը մնայ։ Բայց սպանութեան երբեք։ Բայց ինչո՞ւ համար ես դու ինձ դրա մասին հարցնում։ Դու ինձ զարմացնում ես. Ջեմս։

—Թոյլ տուէք ինձ մի բան ևս ձեզ հարցնելու։ Ի՞նչ կը ստանար կոմս Լուդլօուն, եթէ երեխաները մեռնէին։

—Նա տարեկան եկամուտ կունենար առնուազը մի տասը հազար ֆունտ ստերլինգ։

—Արդ, ուրեմն գործը պարզ է։ Հանդիստացէք, Էդգարը, Լիւսին և Բեատին կենդանի են. նրանք պահուած են Բալդրինում. «Վիկտորիա» նաւը առել է կոմս Լուդլօուն և խորտակել դիտմամբ, որպէսզի

լուր տարածուի պարոն Վինդեննիրի իսկա-
կան ժառանգների կորստեան մասին։ Իսկ
երեխաները անկասկած վաղօրօք բռնու-
թեամբ տեղափոխուած են ուրիշ նաւ, որի
մասին խօսում էին նաւաստիները, որոնց
խօսակցութիւնը ես լսեցի պանդոկում։ Ինչ
նշանակութիւն ունի կոմս Լուդլոուի համար
վճարել խորտակուած նաւի փոխարէն, երբ
նրան սպասում է այսպիսի մեծ հարըս-
տութիւն։

—Ջեմս, սիրելիս, գոչեց կառավարիչը,
դու վերադարձնում ես ինձ կեանքս։ Մի՞թէ
կարելի բան է այն ինչ դու ասում ես։
—Ես բոլորովին չեմ կասկածում դրանում.
համոզուած արտասանեց Ջեմսը. հէնց այ-
սօրուանից ես դէպք կըվնտռեմ քցել ինձ
Իրլանդիա ուղևորուող մի նաւ։ Բայց չը-
դիտէք դուք արդեօք որտեղ է գտնուում
Բալդրինը։ Որքան ինձ յայտնի է, Բալդրինը
մի փոքրիկ տեղ է 12 մղոնի վրայ Ծովափնեայ
Կինղալ քաղաքից, որ ընկած է Իրլանդիայի
հարաւային ափում։

Ուղիղ է, այնտեղ է կոմս Լուդլոուի
կալուածքը և դղեակը։—Դրանից աւելի ինձ

էլ ոչինչ հարկաւոր չէ իմանալ։ Մայրս մի
քիչ փող ունի հաւաքած, իսկ եթէ չըբա-
ւականանէ այդ, ես կըծախեմ Տօմին և մինչև
անգամ իմ հաւատարիմ Բօբին, ինչքան էլ
որ ինձ համար ցաւալի լինի այդ ու
անմիջապէս կուղևորուեմ Կինղալ։ Ես էլ
չեմ լինի Ջեմս Օրելլին, եթէ չխայտա-
ռակեմ կոմս Լուդլոուն և չազատեմ քրոջս
Բեատրիին և նոյնպէս իմ բարեկամներին
Էդդարին և Լիւսիին։

—Սիրելի Ջեմս, ես ուղղակի չգիտեմ
հաւատամ քո ասածներին թէ ոչ։ Ես ար-
դէն խեղճ երեխաներին համարում էի
կորած։ Բայց յամենայն դէպս ես կ'աշխատեմ
անել ինչ որ հնարաւոր է, որպէսզի դու
կարողանաս ազատ գնալ Իրլանդիա։

Ինչու համար դու վատնես քո խեղճ
մօրդ հոգապահուստը և ծախես Տօմին ու
Բօբին։ Ես կըտամ քեզ հարիւր ֆունտ
(մէկ ֆունտ ստերլինգը—մօտաւորապէս
8 ռուբ). որովհետև քո կասկածները ուղիղ
են, հարկ կըլինի քեզ մեծ ծախսեր անել։
Մինչև անգամ հասնելով Բալդրին, դու
դեռ հասած չես լինի քո նպատակին։ Դու

հարկադրուած կըլինիս երկար սպասել խեղճ բանտարկեալների հետ տեսնուելուն ու հարկադրուած կըլինես ծախսելու ապրուստի համար։

Իսկ գուցէ հարկաւոր լինի և կաշառել։

Ջեմսը հիացած էր։ Հէնց այդ օրը Լօնդօնեան նաւահանգստում կանգնած բազմաթիւ նաւերի միջից, նա գտաւ «Ֆինդալ» նաւը, որ միւս առաւօտեան ուղևորուելու էր Կինզալ։ Նա պայմանաւորուեց նաւավարի հետ և սկզբից վճարեց իւր գնալու համար։ Մօրից նա ծածկեց իւր գնալու իսկական պատճառը. նա ասաց նրան, որ պարոն Լամբերտը յանձնել է նրան մի շատ կարևոր գործ, որ վերաբերում է միայն իրան կառավարչին. դրա համար նա հարկադրուած է մի քանի շաբաթով հեռանալ Լօնդօնից։

Մայրը օրհնելով ճանապարհ դրեց նրան և նա առաւօտեան արդէն «Ֆինդալումն» էր։ Մի ժամից յետոյ խարիսխը բարձրացրին, առագաստը թողեցին և «Ֆինդալը» բարեյաջող քամու տակ շարժուեց Թեմզի վրայով։

Ծովով անցնելու ժամանակ, օրը շաբունակուեց ընդամենը երեք օր, Ջեմսին յաջողուեց ծանօթանալ նաւի բոլոր ծառայողների հետ։ Ծառայողների թիւում կար և մէկ նաւաստի Դանիէլ անունով. այդ նաւաստին յայտնեց նրան, որ ծնունդով Բալդրինից է և շատ լաւ գիտէ կոմս Լուդլօուի դղեակը։ Նա յանձնարարեց Ջեմսին բարև տանել իւր ծերունի մօրը և յայտնել, որ ինքը կենդանի է և առողջ։ Նրա հարցին թէ ինչու է Ջեմսը գնում Բալդրին, մեր քաջասիրտը խուսափեց պատասխանից։ Սակայն Դանիէլը դրանով շատ քիչ էր հետաքրքրուում։ Հասնելով Կինզալ, Ջեմսը իսկոյն գնեց հագուստ որպիսին հագնում են Իրլանդիայի գիւղացիք, փողի հետ տալով և իւր հագուստը։ Ցետոյ անմիջապէս առանց յետաձգելու մանրամասն հարց ու փորձ արեց Բալդրինի ճանապարհի մասին և ուղևորուեց։

Երեք ժամից յետոյ նա հասաւ գիւղը։ Հէնց առաջին պատահած գիւղացուց նա հարցրեց, որտեղ է ապրում ծերունի Մակբալլին։ Նրան ցոյց տուեցին գիւղի վեր-

ջում մի աղքատիկ խրճիթ։ Նա ճանապարհ ընկաւ դէպի խրճիթը և դուռը ծեծեց։ Մի պառաւ բաց արեց դուռը և հարցրեց, ինչ է հարկաւոր։

—Ես լուր եմ բերել ձեր որդի Դանիէլից։

—Ա՜խ, Աստուած իմ, գոչեց նա.— Մտէք, մտէք, խնդրեմ, էհ, ինչպէս է նա, կենդանի՞ է, առո՞ղջ է, ինչպէ՞ս է ապրում։

—Նա ողջ և առողջ է և ուղարկեց ձեզ իւր սրտագին բարևը և ահա այս փողերը։ Այդ ասելիս նա հանեց գրպանից չորս ոսկէ փող։ Նա վճռել էր զոհել մի փոքր գումար, որպէսզի կակղացնէ ծերունի Մակբալլիին։ Նա սաստիկ զգացուած էր և երբ վերջացրեց որդու մասին հարց ու փորձը, հարցրեց Ջեմսին թէ իսկապէս ինչն է բերել նրան Բալգրին։ Ջեմսը վաղուց արդէն պատրաստել էր պատասխանը։ Նա պատմեց, որ իրեն բռնի կերպով դարձրել են նաւաստի, բայց ինքը փախել է նաւից. ծնունդով Իրլանդացի է, բայց իւր գիւղը շատ հեռու է այստեղից. Իւր ընկեր Դանիէլը յայտնեց նրան, որ նա կարող է գտնել ժամանակաւոր ապաստարան և համոզուած

լինել, որ Դանիէլի մայրը չի մատնի իրեն։ Լաւ կըլինի, եթէ նա յայտնէ, որ Ջեմս Օրելլին իւր քրոջ որդին է, որը եկել է նրա մօտ ապրելու իբրև մշակ մինչև Դանիէլի վերադարձը։

—Եթէ ձեզ կանչում՝են Օրելլի, ուղիղ որ բարեկամ կըլինենք. ասաց պառաւը.— Մակբալլիի և Օրելլիի ընտանիքը ազգականներ են։ Ես շատ ուրախ կըլինեմ, որ ինձ մօտ ապրէք։ Դանիէլի սենեակը ձեր ծառայութեան տակն է։

—Ես ձեզ կըվճարեմ. ասաց Ջեմսը. ես փող ունեմ, միայն ինձ չմատնէք ձեր համագիւղացիներին։

—Մի անհանգստանաք. ես արդէն գիտեմ, ինչ կ՝ասեմ նրանց. Ջեմսը բնակուեց պառաւ Մակբալլիի մօտ և շուտով ծանօթացաւ ամբողջ գիւղի հետ։ Ոչ մի կերպ ցոյց չտալով որ իրան հետաքրքրում է դղեակը, նա սկսեց ուշադրութեամբ ամեն կողմից զննել նրան։ Բանից երևաց դղեակը անպայման անմատչելի էր, ինչպէս ցամաքից, այնպէս էլ ծովից։ Ոչ մի հնարաւորութիւն չկար մտնել նրա մէջ, որովհետև պահա-

պաննելը օր ու ցերեկ պահպանում էին մուտքը և չէին թողնում ոչ ոքի։ Ջեմսը վերջնականապէս համոզուեց, որ Էդգարը, Լիւսին և Բեասին այնտեղ են, եթէ ոչ հարկաւորութիւն չկար այնպէս խստիւ պահպանել դղեակը։ Երկար ժամանակ Ջեմսը սպասում էր յարմար դէպքի այնտեղ մտնելու համար, բայց նա արդէն իւր մէջ կազմել էր մի յայտնի ծրագիր և իզուր չէր կորցնում ժամանակը։ Նա գնաց Կինզալ և գնեց այնտեղ մեծ քանակութեամբ մետաքսեայ և կանեփեայ թել։

Տանտիկնոջ հարցին, ինչու համար են դրանք, նա պատասխանեց թէ ուզում է թռչուններ բռնելու համար ցանց պատրաստել. և իսկապէս նա է ցոյց նրան մի քանի հատ շինեց, իսկ դաղտնի կերպով նա պատրաստում էր մի ինչ որ բոլորովին ուրիշ բան։ Անտառում, որ գտնուում էր հէնց դղեակի մօտ, թռչնորսութիւնը դնում էր շատ յաջող։

Մէկ անգամ, Ջեմսը հանելով ցանցից բռնած թռչունները, նկատեց մի ինչ որ 14 տարեկան տղայի, որը հետաքրքրու-

թեամբ հետևում էր նրա աշխատանքին։

—Սովորեցրու թռչուններ բռնել, ասաց նա։

—Շատ լաւ, ասաց Ջեմսը.—Իսկ դու ով ես. ինչպէս է քո անունը։

—Ես Հենրի Վիլլէտն եմ. Բալգրին դղեակի կառավարչի որդին։

—Ա՜, ահա թէ ինչ, սառնասրտութեամբ ասաց Ջեմսը. և սկսեց արձակել ցանցը, որպէսզի ծածկի իւր յուզմունքը։

Լաւ, լաւ, եթէ ցանկանում ես, մինչև անգամ կըշինեմ քեզ համար մեծ վանդակ, որտեղ դու կարող ես թռչուններ պահել։ Միայն հարկաւոր է նրանց լաւ կերակրել ու հոգս տանել։

—Ա՜խ, ինչպէս ես ուրախ եմ. թէ չէ մեր դղեակը այնպէս տխուր է։

—Մինթէ այնտեղ ոչ ոք չունես, որոնց հետ կարողանայիր խաղալ։

Հենրին կմկմաց.

—Կաց, ասաց նա, բայց ինձ հրամայուած է ոչինչ չասել դրա մասին։ Հայրս ինձ սաստիկ արգելել է։

—Ես չեմ էլ հարցնում։ Դա բոլորովին ինձ չի վերաբերում. իսկ ես վանդակդ կը-չնեմ և կըսովորեցնեմ թռչուն բռնել։

Իսկ ինչպէս է քո անունը։

—Ջեմս Օրելլի։ Ես պառաւ Մակբայլիի քրոջ որդին եմ. Ջեմսի սիրտը ուրախու-թեամբ բաբախեց այն մտքից, որ ինքը Աստուած է առաջ բերում դղեակը մտնելու դէպքը և տեսնուելու նրանց հետ, որոնց աղա-տութեան համար նա եկել էր։ Նա ամբողջ գիշեր աշխատեց վանդակի վրայ, որը պատ-բաստեց ուռենու ճիւղերից։ Վանդակը շատ լաւը դուրս եկաւ։ Միւս օրը նշանակած ժամին նա գնաց անտառ և հետը վերցրեց ցանցը ու վանդակը։

Հենրի Վիլլէտը անհամբերութեամբ սպասում էր նրան։—Ա՜խ, ինչքան լաւ վան-դակ է, ուրախութեամբ բացականչեց նա. շնորհակալ եմ, Ջեմս, շնորհակալ։ Եթէ ուզում ես, հայրիկը քեզ կըվճարի։

—Հարկաւոր չէ. դու էլ ինձ մի օրուցէ բան կընծայես։ Դէհ, գնանք թռչուններ բռնելու։

—Թռչնորսութիւնը անցաւ շատ յաջող, և Հենրին ուրախ-ուրախ գնաց տուն վան-դակով, որի մէջ նստած էին մօտ 20 հատ գեղեցիկ թռչնիկներ։ Տղաները այնպէս մտերմացան, որ Հենրին ուղղակի տխրում էր առանց Ջեմսի. բայց վերջինս իրան շատ զգոյշ էր պահում և երբէք ինքը չէր առաջ մօտենում։ Սակայն դա էլ աւելի գրաւիչ էր դարձնում դէպի Հենրին։

Մէկ անգամ նա ասաց Ջեմսին.

—Շուտով կըսկսուեն անձրևները, ար-դէն մօտենում է սեպտեմբերը։ Որտեղ կըհանդիպենք մենք այն ժամանակ։

—Իսկ որտեղ ես ուզում, Հենրի։ Դու կարող ես ինձ մօտ գալ։—Իսկ ես ուզում եմ, որ դու գաս ինձ մօտ։

—Շնորհակալ եմ։ Ես չեմ գայ։

—Ինչու՞ համար։

—Ինձ չեն թողնի. դղեակում ձեզ մօտ ոչ ոքի չեն թողնում։

—Ես կըխնդրեմ հայրիկին։ Անպատճառ կըխնդրեմ։

—Ինչպէս ուզում ես։

Միւս օրը, այն ժամին երբ տղաները խաղում էին անտառում, պառաւ Մակբալիին այցելեց ինքը կառավարիչը—Ջոն Վիլլեսը։ Նա մանրամասն հարցրեց նրանից քրոջ որդու մասին։

Նրա յայտնած տեղեկութիւնները բոլորովին հանգստացրին նրան և Հենրին իրաւունք ստացաւ հրաւիրել իւր ընկերոջը իրանց մօտ։

Երկու օրից յետոյ Հենրին և Ջեմսը ձեռք ձեռքի տուած մօտենում էին դղեակի դռներին։ Հենրին հրճւում էր. իսկ Ջեմսը դողում էր վախից ու յուզմունքից։ Նա գիտէր, որ մէկ րոպէից յետոյ կըտեսնէ Էդգարին, Էլիսին ու Բեատին և չի համարձակուի ասել մի խօսք ու մինչև անգամ նայել նրանց վրայ ապա թէ ոչ ամեն ինչ կորած էր։

Պահապանները թողեցին նրանց առանց հակառակութեան. նրանք մտան բաղը հէնց այն ժամանակ, երբ այնտեղ ման էին գալիս խեղճ դերիները։ Ահա ինչու գոռաց Բեատին. նա իսկոյն ճանաչեց եղբօրը։ Նրա փոքրիկ խորամանկութիւնը շատ լաւ յա-

ջողուեց. քորոջի ծակելը բոլորովին հանգստացրեց դէպի նրան վազող պահապաններին։ Էդգարը և Էլիսին նոյնպէս ճանաչեցին Ջեմսին. բայց այնպէս զարմացած էին նրա յայտնուելովը, որ չկարողացան մի խօսք անգամ արտասանել։

Ջեմսը մատը տարաւ դէպի շրթունքները, դրանով տալով լռութեան նշան։ Բեատին նա ձգեց փոքրիկ հացի գնդակ։ Ոչ ոք, բացի Բեատիից, այդ չնկատեց։ Նա հանգստութեամբ անցաւ բակով մի քանի անգամ, չհեռացնելով աչքը գնդակից և վերջապէս մօտենալով նրան, վայր գցեց թաշկինակը, որը վերցնելիս, վերցրեց և գնդակը։

Վերադառնալով սենեակը, երեխաները իրանց տուին ուրախութեան։ Նրանք շատ լաւ հասկանում էին, որ Ջեմսը ուղարկուած է այստեղ, որպէսզի իրանց ազատի և յամենայն դէպս արդէն նրա երևալը սրանց համար անսահման ուրախութիւն էր։

Բեատին զգուշութեամբ կոտրեց գնդակը և նրա մէջ գտաւ ճմռթուած նամակ հետևեալ բովանդակութեամբ.

«Դուք շուտով ազատուած կըլինէք։ Վաղը ես Հենրի Վիլլեսի հետ, խաղալու եմ գնդակ։ Ես կըդցեմ գնդակը այն կողմը, որտեղ դու կանգնած կըլինես. կըվերցնես այն և ցոյց կըտաս թէ տալիս ես ինձ, բայց պահիր քեզ մօտ զգուշութեամբ։ Գնտակի մէջ կըդտնես մետաքսէ թել։ Կէս գիշերին, երբ աշտարակի տակ կըլսես սուլոց, իջեցրու նրան լուսամուտից. երբ ծանրութիւն կըզգաս կըքաշես, մնացածը կըհասկանաս»։

Ճշմարիտ, միւս օրը Ջեմսը առաջարկեց Հենրիին գնտակ խաղալ բակում։ Հենրին հօրից թոյլտուութիւն խնդրելով համաձայնեց և նրանք դուրս եկան բակը։

Հեռուում երեխաները զբօսնում էին։ Ջեմսը ցոյց էր տալիս, որ իբր թէ ոչ մի ուշադրութիւն չի դարձնում նրանց վրայ. հանեց գրպանից հմտութեամբ շինած դոյնզգոյն բուրդից գնդակը։ Խաղը սկսուեց։ Ցանկարծ գնդակը գլորուեց շատ հեռու, հէնց այնտեղ, որտեղ նստած էր Բետսին։ Ջեմսը վազեց դէպի նա։ Նա բարձրացրեց գնտակը և մեկնեց նրան, բայց սա վազելիս յաջողեցրեց գրպանից հանել իսկը միևնոյն

տեսակ գնտակ և այնպէս ցոյց տուեց, որ այն ստացաւ աղջկանից։ Բետսիի վերցրած գնտակը անյայտացաւ իսկոյն նրա գոգնոցի տակ, հէնց այն ժամանակ երբ Ջեմսը ծածկել էր նրան։ Այդ բոլորը կատարուեց մէկ վայրկեանում։ Ոչ ոք չնկատեց։ Խաղալով էլի կէս ժամ, Ջեմսը մնաց բարև արեց Հենրիին և գնաց տուն։ Նա իսկոյն սկսեց շարունակել սկսած գործը—թոկից շինած երկար սանդուղը։

Ծերունի Մակբալիի հարցին, թէ ինչ է անում, նա պատասխանեց, որ այսօր գիշերը ծովի մակընթացութեան ժամանակ գնալու է ձուկ որսալու և դրա համար ուզում է վերջացնել արդէն շատ շուտանից սկսած ցանցը։ Երեկոյեան մօտ ամեն ինչ պատրաստ էր։ Նա հարևանից խնդրեց ձկնորսական նաւը, որի մէջ տարաւ իւր սանդուղքը ապահովութեան համար՝ փաթաթուած ցանցերով և անհանգերութեամբ սկսեց սպասել կէս գիշերին։

Ծովի հոսանքը քամու օգնութեամբ սաստիկ ուժեղ էր, այնպէս որ մինչև ժամը 10-ը ամբողջ ափը լցուած էր ջրով, իսկ

կէս գիշերին ջուրը արդէն հասաւ դղեակին, որի մօտ մնացել էր ջրից ազատ միայն մէկ ժայռ։

Ջեմսը ուղղեց իւր նաւակը դէպի այդ ժայռը։ Նա կապեց նաւակը նրանից և սուլեց։ Մէկ րոպէից յետոյ նա նկատեց ժայռի վրայ իջնող մետաքսէ ժապաւէնը. նա կապեց սանդուղքը ժապաւէնից և թեթև քաշեց։ Ժապաւէնը իսկոյն սկսեց բարձրանալ, տանելով իւր հետ և սանդուղքը։ Ջեմսը համոզուելու համար թէ ամուր են կապել նրան սենեակում, մի քանի անգամ ուժեղ քաշեց։ Երևաց, որ նա ամրացրած է շատ պինդ։ Հաւանական էր, դերիները շատ լաւ էին հասկացել, թէ բանը ինչումն է։

Ջեմսը սկսեց իւր վտանգաւոր ճանապարհորդութիւնը սանդուղքով դէպի վերև։ Նրա կեանքը մի մազից էր կախուած։ Նա յաջողութեամբ հասաւ մինչ ժայռի վերևը և հանգստացաւ։ Բայց ունէր էլի բարձրանալու մօտ 60 աստիճան։ Աշտարակում սարսափած սպասում էին նրա երևալուն և երեքն էլ ամբողջ այժով բռնել էին սանդուղքը։

Անցան տաժանելի սպասողութեան մի

քանի րոպէներ։ Բայց ահա երևաց Ջեմսի գլուխը և մի քանի վայրկեանից յետոյ նա թռաւ սենեակը։ Խեղճ դերիների ուրախութեանը չափ չկար. քիչ էր մնում, որ խեղճ Ջեմսին խեղդէին իրանց գրկում։ Յետոյ սկսուեց փոխադարձաբար հարց ու փորձ։ Ամենից առաջ Ջեմսը խնդրեց Էդդարին պատմել, ինչպէս է այդ բոլորը պատահել, իսկ յետոյ ինքն էլ պատմեց այն ամենը, ինչ որ անցել էր նրանց բացակայութեան ժամանակ։ Կոմս Լուդլոուի արարքը և նրա չար միտքը հիմայ բոլորովին պարզ էր։ Մնում էր միայն գտնել մի խորամանկութիւն փախչելու համար։ Սակայն աղջիկներին անհնար էր իջեցնել պարանէ սանդուղքով։ Երկար ժամանակ մտածում էին երեխաները, թէ ինչպէս անեն և վերջապէս վճռեցին այսպէս, կ'իջնեն միայն Ջեմսը և Էդդարը, առաւօտեան Բետսին և Լիսին աղմուկ կբարձրացնեն և կառավարչին կասեն, թէ Էդդարը լուսամուտից գլուխը հանել էր և նայում էր ժայռերին, բայց յանկարծ նա կորցրեց հաւասարակշռութիւնը և ընկաւ ծովը։ Այդ

հարկաւոր է անել առաւօտեան վաղ, թէ չէ տեղատուութիւնը կը սկսուի և խարերայութիւնը կը յայտնուի,

Ամուր կապելով պարանի սանդուղքը դրասեղանից, Ջեմսը հրաժեշտ տուեց Բեատիին և Էլիսիին ու սկսեց իջնել։ Մնացածները որտի բաբախումով սպասում էին պայմանական նշանին։ Բոլոր աչքերը նրանց թուում էր ժամեր։ Բայց ահա լսուեց ցանկալի սուլոցը, բոլորի երեսին երևաց ուրախութեան ժպիտ։ Այն ժամանակ Էդգարը համբուրելով քրոջը և Բեատիին ասաց.

—Դէհ, հիմայ իմ հերթն է։ Աստուած ողորմած է։ Երկար չէք տանջուի դուք այստեղ։ Մի տխրէք, և յոյներդ դրէք ինձ վրայ։ Միայն տեսէք, ձեր դերը լաւ կը խաղաք։ Աստուած կընկերէ մեզ այդ խարերայութիւնը, որովհետև ազատուելու ուրիշ միջոց չկայ։ Աղջիկները սրտատրոփ նայում էին, թէ ինչպէս է Էդգարը դուրս գալիս լուսամուտից։ Ահա անյայտացաւ նրա իրանը, յետոյ գլուխը և ամեն ինչ հանդարտուեց։ Էդգարը այնքան հմուտ չէր, ինչպէս Ջեմսը, և դրա համար նրա իջնելը տևեց աւելի

երկար։ Բայց ահա—օ, ուրախութիւն։ լսուեց երկրորդ սուլոցը։ դա նշան էր, որ Էդգարն էլ դոնուում է նաւակում։ Այն ժամանակ Բեատին յետ արեց սանդուղքը և ժապաւէնով իջեցրեց ներքև։ յետոյ նա թողեց ձեռքից և ժապաւէնը ու լուսամուտը ծածկեց։ Նրանք այնքան բախտաւոր էին, այնքան յուզուած, որ քնի մասին մտածելն անդամ աւելորդ էր։

Նրանք գիտէին, որ ազատութեան ժամը մօտեցել է և որ Էդգարը ու Ջեմսը կարող են փախչել վտանգից։ Իսկապէս մեր քաջասիրտները հասնելով ափ, իսկոյն ձեռք առան նախազգուշութեան բոլոր միջոցները։ Ջեմսը մանրամասն պատմեց Էդգարին, ինչ ճանապարհով է հասել Կինղալ քաղաքը և տուեց նրան փող։

—Առաւօտեան դու այնտեղ կըլինես։ Իսկոյն կըգնես քեզ համար իրլանդական հագուստ և նաւահանգստում կըփնտռես Լօնդօն գնացող նաւ։ Ժամը 2-ին ինձ կըսպասես եկեղեցու մօտ։ Ես ծերունի Մակբալլին կ'ասեմ, որ գնում եմ քաղաք։ այնտեղ կըմնամ մինչև երեկոյ, բայց իրօք

բոլորովին չեմ վերադառնայ։ Իմ գոյքս ես կը թողնեմ նրան յիշատակ, իսկ ճաշի և սենեակի համար ես նրան սկզբից վճարել եմ։ Հէնց վաղն և եթ, եթէ նաև դըտնենք, կ՚ուղևորուենք Լոնդոն։

—Ո՛հ Ջեմս, գոչեց Էդգարը, արտասունքները աչքերին փաթաթուելով Ջեմսին. ինչո՞վ կարող եմ ես շնորհակալ լինել քեզնից այն ամենի փոխարէն, ինչ որ դու գործեցիր ինձ համար։ Դու երկու անգամ ազատեցիր իմ կեանքը, իսկ ես ոչնչով արժանի չեմ այդպիսի զոհաբերութեան քո կողմից։ Բայց սպասիր, մոտենում է ժամը, երբ դու կը տեսնես, որ ես չեմ պատկանում ապերախտների կարգին։ Հիմայ ես ոչինչ չեմ ասի. թոյլ տուր առաջ վերջացնել հաշիւս չարագործ հօրեղբօրս հետ։ Մնաս բարև, իմ ընկեր, մնաս բարև։

Նրանք բաժանուեցին և Էդգարը շտապով անյայտացաւ գիշերուայ խաւարի մէջ։

—◊◊—

ՎԵՐՋԱԲԱՆ

Երկու շաբաթից յետոյ ամբողջ Լոնդոնը շտապում էր քրէական դատարանի դահլիճը, լսելու մի արտակարգ դատ, վերաբերեալ կոմս Լուդլոուի ամբաստանութեան, իւր փորձի համար, իւրացնելու հանգուցեալ բարօնէտ Վինդենիրի ժառանգութիւնը նրա որդոց յափշտակութեան միջոցով։ Դատարանը ամեն ինչ պարզել էր։ Գործի բոլոր մանրամասնութիւնը բացուեց։ Մեղադրողների նստարանի վրայ նստած էին կոմսի հետ միասին «Վիկտորիա»-ի տէր—Էբենեզեր Կոդրէն, որ համաձայնել էր դիտմամբ խորտակել նաւը, երկու նաւաստի, որոնց պատկանում էր «Վիկտորիա»-ի ետևից գնացող նաւը, որ վերցրել էր քնեցրած երեխաներին և հասցրել Բալդրին։ Վերջապէս Ջոն Վիլլէաը անախորժութիւն կրեց նստելու նախնական արդելարանում և մեղադրեալների նստարանի վրայ կոմս Լուդլոուի յանցաւոր դիտաւորութիւնները ծած-

կելու և այն օգնութեան համար, որ նա ցոյց տուեց ապօրինի կերպով փակած պահելով Էդգար և Լիւսի Վինդեննիրին և Բեատի Օրելլիին։ Գրաֆ Լուդլոուն ամեն ինչ խոստովանեց։ Եւ վերջապէս նա չէր էլ կարող հրաժարուել։ Հէնց որ բանտարկեցին և կանգնեցրին դէմ առ դէմ Էդգարի հետ, նա նրան ծովի եզերքում համարելով խեղդուած՝ դողաց և հէնց այստեղ խոստովանեց։ Դատարանը զրկեց նրան կոմսի տիտղոսից և նշանակեց աքսոր նոր Կալեդոնիա 20 տարով։ Ջոն Վիլլեսը աւելի հեշտութեամբ աղատուեց։ Աչքի առաջ ունենալով, որ նա ստորադրեալ մարդ է, և չէր կարող չկատարել կոմսի հրամանները, նրան նշանակեցին բանտարկութեան 3 ամիս։ Նաւի տէրը և նաւաստիները արդարացան, որովհետև չգիտէին կոմսի չարագործ մտքերը և նրանց գործողութիւնը չհամարեցին չարագործութիւն։

Էդգարը և Լիւսին կրկին անգամ համարեցին բարձն Վինդեննիրի կալուածքներին օրինաւոր ժառանգներ և նրանց խնդիրքով խնամակալ նշանակեցին ազնիւ

Լամբերտին։ Ինչ վերաբերում է Ջեմսին և Բեատիին, ուզում էին առաջուայ պէս աշխատանք ակսել. իսկ Էդգարը և Լիւսին դրա մասին լսել անգամ չէին ուզում։ Նրանք բոլորը միասին բնակուեցին Էդգարի դըղեակում։ Այդպիսով խեղճ Մէրրի Օրելլին՝ Ջեմսի և Բեատիի մայրը, յաւիտեան ազատուած էր հոգսից ու թշուառութիւնից։ Էդգարը, Լամբերտի համաձայնութեամբ Ջեմսին նշանակեց աարեկան թոշակ ց՝մահ 200 ֆունտ։ Եւ Ջեմսը աղնութեամբ օգտուեց այդ արդիւնքից. նա մտաւ ճարտարապետութեան դպրոցը և սկսեց ջանասիրութեամբ աշխատել իւր կրթութեան համար։ Հինգ տարուց յետոյ նա դարձաւ հիանալի ճարտարապետ։

Բեատին Լիւսիի հետ սովորում էր Լօնդօնի ամենալաւ ուսուցիչների մօտ։

Մեր երիտասարդ հերոսները դարձան անբաժան ընկերներ։ Հէնց որ Էդգարը և Լիւսին դուրս եկան խնամակալութեան տակից, Ջեմսի և Բեատիի հետ կապուեցան աւելի մօտ կապերով։ Էդգարը ամուսնացաւ Բեատիի հետ, իսկ Ջեմսը նրա քրոջ,

որ անգլիական եկեղեցու օրէնքով թոյլ է տրուում։ Բայց չնայած դրան, նրանք շարունակում էին ապրել մէկ տանիքի տակ և երբեք նրանց մէջ չէր ծագում ոչ կռիւ և ոչ էլ անբաւականութիւն։

Ծերունի Լամբերտը և Մէրի Օրելլին, նոյնպէս ծերացած, ապրում էին շատ բախտաւոր։ Լամբերտը տեսնելով երիտասարդ ամուսինների բախտաւորութիւնը հիանում էր ու յաճախ ասում.

—Բարի և աղնիւ մարդիկ ինչքան էլ որ թշուառութիւն քաշեն միշտ վերջ ի վերջոյ կըտեսնեն ուրախ օրեր։

—Դուք ճշմարիտ էք ասում, պատասխանում էր Մէրին, որովհետև բարութիւնը և աղնուութիւնը Աստուծոյ շնորհն է. մեղ կարող է տալ իսկական բախտաւորութիւն միայն այն, ինչ որ ուղարկուած է Աստուծուց։

ՎԵՐՋ

ՊԵՏ ԳՈՍ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0387240

1400